ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 15-Լ «05» մայիսի 2022

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 57-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ‹‹Նախադպրոցական կրտսեր երկրորդ խմբի կրթական համալիր ծրագիրը›› N 57-Լ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

8/5/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարի 2022 թվականի

օգոստոսի 5-ի N 15-Լ հրամանի

«Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարի 2021 թվականի

դեկտեմբերի 16-ի N 57-Լ հրամանի

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԿՐՏՍԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ
(3-4 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ)

Ծրագիրը հասցեագրված է նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժներին, սանի դաստիարակությամբ զբաղվող անձանց՝ աջակցելու 3-4 տարեկան սաների՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված կարողունակությունների ձևավորմանը, առօրյայի կանոնակարգված կազմակերպմանը, զարգացնող առարկայական միջավայրի ստեղծմանը, սանի գործունեության տարբեր ձևերի կազմակերպմանը:

ԵՐԵՎԱՆ 2021

Կրտսեր երկրորդ խմբի 3-4 տարեկանների կրթական հիմնական ծրագիրը կառուցված է ՀՀ Կառավարության կողմից հաստատված նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջների հիման վրա (13.05.2021թ N 744 -Ն որոշում)՝ այդ տարիքի սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ծրագրի բովանդակության յուրացումը կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների կողմից իրականացվում է նրանց համար կազմված ԱՈՒԶՊ-ով (անհատական ուսուցման և զարգացման պլան):

3-4 տարեկան սաների կրթական հիմնական ծրագիրը ներառում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված զարգացման հետևյալ հիմնական բնագավառները(ուղղությունները)՝

1) Խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացում.

3-4 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի խոսքի զարգացման և լեզվամտածողության, տրամաբանության, ճանաչողական հետաքրքրությունների, ձևավորման աշխատանքները պարապմունքների, սանի խաղային գործունեության և առօրյայի կազմակերպման ընթացքում:

2) Հուզակամային և սոցիալ-անձնային զարգացում.

3-4 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի հասակակիցների և մեծահասակների հետ շփումը, հուզական հաղորդակցումը, սոցիալական վարքագծի ձևավորմանը, բարոյակամային որակների զարգացմանը նպաստող գործունեության ձևերը:

3) Շարժողական և ֆիզիկական զարգացում.

3-4 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի շարժողական ակտիվությունը ապահովող գործունեության ձևերը. մանր և խոշոր մկանները զարգացնող խաղերը, զբոսանքները, կոփման արարողությունները:

4) Աշխարհաճանաչման ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում.

3-4 տարեկանների համար այս բնագավառը ներառում է շրջակա միջավայրի հետ ծանոթացումը, զարգացնող- առարկայական միջավայրում կողմնորոշումը, ինքնուրույնության, ինքնասպասակման և անվտանգ կենսակերպի տարրական հմտությունների ձևավորումը, ստեղծագործական կարողությունների ձևավորումը գործունեության տարբեր ձևերում և առօրյայում:

5) Բարոյական, ազգային, էկոլոգիական, իրավական, սեռային ինքնագիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ.

3-4 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սեփական ինքնությունը ճանաչելու, բարոյական, գեղագիտական, էկոլոգիական, իրավական դաստիարակության տարրեր ապահովող գործունեության ձևերը:

Հաշվի է առնվել երեխայակենտրոն ուսուցման ու դաստիարակության, շարունակական կրթության ապահովման պահանջը:

Ֆիզիկական, մտավոր, բարոյական, աշխատանքային, էկոլոգիական, սեռային, գեղարվեստագեղագիտական դաստիարակության խնդիրները բխում են հասարակության զարգացման պահանջներից: Դրանք համակցված իրագործվում են ծրագրային առանձին բաղադրիչներում և միտված են ոլորտային վերջնարդյունքների ապահովմանը:

Ծրագրային բովանդակությունն ապահովում 3-4 տարեկան սաների գիտելիքների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորումը՝ յուրաքանչյուր սանի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի հաշվառմամբ:

Ծրագիրը սահմանում է տվյալ տարիքային խմբի (3-4 տարեկանների) ուսումնադաս-տիարակչական գործընթացի բովանդակության կառուցվածքը, ուսումնական տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղությունները ներառող շաբաթական պարապմունքների քանակը, կանոնակարգային պահերը, շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, տարեվերջին սաներից ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ զարգացման ոլորտների:

3-4 տարեկանների կրթական հիմնական ծրագրին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

- համապատասխանությունը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին.
- կրթության աշխարհիկ բնույթը,
- երեխաների և մեծահասակների փոխգործունեության երեխայակենտրոն մոտեցման ապահովումը,
- ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը,
- նախադպրոցական կրթության բովանդակության մեջ սանի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղարվեստական զարգացման, իրավունքներին և պարտականություններին, էկոլոգիական նախագիտելիքներին ծանոթացման ներառումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ծրագրում ներկայացված են դաստիարակության և ուսուցման նպատակները, խնդիրները ըստ ծրագրային բաղադրիչների, երեխաների առօրյայի կազմակերպման առանձնահատկությունները, վերջնարդյունքների ապահովման հիմքերը, երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ծրագրի նպատակն է՝

- 3-4 տարեկան սաների տարիքային և անհատական առանձնահատկություններին համապատասխան հոգեկան ու ֆիզիկական ներդաշնակ զարգացման ապահովումը՝ ըստ ոլորտներով սահմանված վերջնարդյունքների:
- Նախադպրոցական կրթության ավարտին սաներից ակնկալվող կարողու-նակությունների(գիտելիքներ, հմտություններ, համապատասխան վերաբերմունք և վարքագիծ) ձևավորմանն ուղղված աշխատանքների իրականացումը:
- Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման գործում նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին՝ սատարումն ու աջակցումը:

Կրտսեր երկրորդ խմբի 3-4 տարեկանների կրթական համալիր ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, յուրաքանչյուր երեխայի համար՝ սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթական ծրագրերի բովանդակությունը ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1) շարժողական ոլորտ (Հապավումը՝ Շ).
2) խոսքի և հաղորդակցական ոլորտ (Հապավումը՝ ԽՀ).
3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ (Հապավումը՝ ՀՍԱ).
4) իմացական ոլորտ (Հապավումը՝ Ի).
5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ (Հապավումը՝ ԻԱԱ):

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված ինը կարողունակությունների ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ կրտսեր 2-րդ խմբում սաների հետ օրվա կանոնակարգային պահերին կազմակերպվող աշխատանքն արտացոլվում է 6 ծրագրային բաղադրիչներում՝

1. Խոսքի զարգացում
2. Ինձ շրջապատող աշխարհը
3. Մաթեմատիկական տարրական պատկերացումներ
4. Ֆիզկուլտուրա
5. Երաժշտություն
6. Կերպարվեստ և կառուցողական աշխատանք:

Ծրագրային այս բաղադրիչների զատումը պայմանական է, դրանք սերտորեն փոխկապակցված են: Սանի զարգացումը համակողմանի և լիարժեք է ընթանում, եթե բոլոր բաղադրիչներով միաժամանակ և շարունակական աշխատանք է տարվում:

Ծրագրային բոլոր բաղադրիչներն ուղղված են ոլորտային վերջնարդյունքների ապահովմանը, որոնք էլ միտված են առանցքային կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը նախադպրոցական տարիքի ավարտին:

Նախադպրոցական տարիքի ավարտին սանից ակնկալվող կարողունակություններն են՝

1. լեզվական և հաղորդակցական կարողունակություն,
2. ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն
3. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5. թվային և մեդիա կարողունակություն
6. մշակութային կարողունակություն
7. մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն
8. տնտեսական կարողունակություն
9. ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:

ՍԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
ԿՐՏՍԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ
(3-ԻՑ ՄԻՆՉԵՎ 4 ՏԱՐԵԿԱՆ)

Շարժողական ոլորտ

ա. երեխան կարողանում է կատարել և զուգակցել հիմնական շարժողական գործողությունները,

բ. կարողանում է խաղալ շարժախաղեր (վազքով, ցատկերով, նետումներով, սողանցումով, մագլցումով) առանց առարկայի և առարկաներով,

գ. կարողանում է վարել եռանիվ հեծանիվ, ինքնագնաց, սահել սահնակով,

դ. ջրում կատարում է լողի տարրերով պարզ վարժություններ,

ե. կատարում է ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանց առարկաների և առարկաներով,

զ. կարողանում է կատարել ճիշտ կեցվածքի ձևավորման, հարթաթաթության կանխարգելման վարժություններ,

է. կատարում է պարզ զուգակցումներով պարային շարժումներ,

ը. պահպանում է հիգիենայի հիմնական պահանջները,

թ. ֆիզիկական դաստիարակության տարբեր ձևերում դրսևորում է ակտիվություն, համագործակցություն, կարգապահություն,

ժ. գիտի շարժախաղերի և մարզաձևերի անվանումներ.

Խոսքի և հաղորդակցության ոլորտ

ա. սանն ընկալում է ուրիշի բանավոր խոսքը և տալիս համարժեք պատասխաններ,

բ. տարբերում է հնչարտասանությամբ նման բառերը (տուն, շուն և այլն),

գ. ընկալում է բառի նշանակությունը, դրսևորում բառակազմության տարրական կարողություններ՝ բառերին ավելացնելով փոքրացնող վերջածանցներ (փիսիկ, շնիկ):

դ. ինքնուրույն ձևակերպում և արտահայտում է սեփական մտքերը՝ նախադասություններում բառերը կիրառելով ճիշտ հաջորդականությամբ:

ե. կազմում է հարցեր՝ կիրառելով «ո՞վ», «ի՞նչ», «որտե՞ղ», «ե՞րբ», «ինչու՞» բառերը,

զ. ընկալում է ներկայացված նկարի բովանդակությունը և վերարտադրում այն.

է. իրավիճակից ելնելով՝ իրականացնում է հաղորդակցում մեծահասակների և հասակակիցների հետ.

Իմացական ոլորտ

ա. սանը մտապահում և վերարտադրում է ներկայացվող որոշակի տեղեկատվությունը,

բ. կողմնորոշվում է տարածության և ժամանակի մեջ,

գ. նկարագրում է առարկաների, երևույթների առանձին կողմերը,

դ. ունի առարկաների մեծության, չափի, ձևի և քանակի վերաբերյալ որոշակի պատկերացումներ, ճանաչում է գույները, երկրաչափական պատկերները,

ե. հասկանում է երևույթների միջև պատճառահետևանքային պարզագույն կապերը,

զ. դրսևորում է հասակակիցների հետ համատեղ գործելու ցանկություն, մտավոր ակտիվություն, հանդես է գալիս նախաձեռնողի դերում,

է. կենտրոնացնում է ուշադրությունն առաջադրանքի, խաղի կանոնների պահպանման վրա,

ը. դրսևորում է տարբեր նյութերով աշխատելու տարրական հմտություններ,

թ. տարբերում է մասնագիտությունները, դրանց հիմնական գործառույթները,

ժ. ունի տարրական պատկերացումներ ինչպես հայկական, այնպես էլ այլ ազգերի մշակութային տարրերի մասին.

Հուզական, սոցիալ-անձնային ոլորտ

ա. երեխան կարողանում է ներկայացնել իր ցանկություններն ու հետաքրքրությունները, դրսևորում է իրավիճակին համապատասխանող հուզականություն,

բ. սոցիալական հույզերի միջոցով արտահայտում է իր վերաբերմունքը շրջապատող աշխարհին,

գ. հասակակիցների հետ հաղորդակցման դժվարությունները փորձում է լուծել մեծահասակների օգնությամբ, հասակակիցների հետ հարաբերություններում ձգտում է համառությամբ առաջ տանել սեփական ցանկություններն ու պահանջները,

դ. հասակակիցների հետ համատեղ գործունեության ընթացքում ջանքեր է գործադրում սեփական վարքն ու հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ, ձգտում է հաճոյանալ մեծահասակներին,

ե. կողմնորոշվում է սոցիալական միջավայրում, հարաբերություններում փորձում է պահպանել սոցիալական վարքի պահանջներն ու բարեկիրթ վարվեցողության կանոնները,

զ. գիտի իր սեռը, ունի պատկերացումներ իր և ուրիշների մասին, սիրում է պատմել իր հաջողությունների մասին.

Ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ

ա. երեխան դրսևորում է ինքնասպասարկման հմտություններ, հետևում և պահպանում է անձնական հիգիենայի հիմնական կանոնները,

բ. մեծահասակի ուղղորդմամբ սկսում է գիտակցել առողջության պահպանման ու առողջապահպան միջոցառումների անհրաժեշտությունը,

գ. դրսևորում է առողջ ապրելակերպի տարրական սովորություններ, նախընտրում է առողջ և օգտակար սնունդը,

դ. բարձրաձայնում է կամ վարքով ցույց է տալիս իրեն անհանգստացնող առողջական խնդրի մասին,

ե. հետևում է անվտանգության հիմնական կանոններին՝ մեծահասակի հիշեցումով.

ՍԱՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օրվա կանոնակարգը սաների կյանքի կազմակերպման, համակողմանի զարգացման, առողջության ամրապնդման և դաստիարակության կարևոր պայման է: Այն անհրաժեշտ միջոց է սաների ուսումնաադաստիարակչական աշխատանքների ու գործունեության ազատ ձևերի նախագծման, ծանրաբեռնվածության համաչափ բաշխման համար: Օրվա կանոնակարգը արտացոլում է 3-4 տարեկան սաների զարգացման առանձնահատկությունները և հնարավորություն տալիս ներգրավվելու նրանց ինտեգրված, ակտիվ մասնակցային գործունեության մեջ: Առաջնորդվելով ստորև ներկայացված 9 ժամյա աշխատաժամով աշխատող նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնակարգով, յուրաքանչյուր հաստատություն պետք է կազմի իր պայմաններին և առանձնահատկություններին համապատասխան կանոնակարգ:

Ցանկալի է կանոնակարգային պահերի մեծ մասը կազմակերպել բակում:

ԿՐՏՍԵՐ 2-ՐԴ ԽՄԲԻ (3-4 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ) ՕՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(9 –ժամյա, հնգօրյա աշխատանքային շաբաթյա ռեժիմով)

N	Կանոնակարգային պահեր	Ժամերը տարվա ցուրտ եղանակին	Ժամերը տարվա տաք եղանակին
1	Սաների ընդունելություն, խաղեր, ինքնուրույն գործունեություն, առավոտյան մարմնամարզություն	8.30 - 9.30	8.30 - 9.30
2	Նախաճաշի նախապատրաստում,նախաճաշ	9.30-10.00	9.30- 10.00
3	Ինքնուրույն գործունեություն	10.00- 10.15	10.00-10.15
4	Պարապմունքների նախապատրաստում	10.15-10.30	10.15 -10.30
	Պարապմունք առաջին Պարապմունք երկրորդ	10.30-10.50 11.05 -11.25	10.30 -10.50
5	Խաղեր, զբոսանքի նախապատրաստում, զբոսանք (խաղեր, դիտումներ, աշխատանք, ինքնուրույն գործունեություն)	11.25-12.10	10.50 -12.10 /կոփիչ միջոցառումներ բակում/
6	Վերադարձ զբոսանքից, խաղեր	12. 10-12.20	12. 10 -12.20
7	Ճաշի նախապատրաստում, ճաշ	12.20- 12.45	12.20 -12.45
8	Ինքնուրույն գործունեություն	12.45-12.55	12.45-12.55
9	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	12.55 -14.50	12.55 -14.50

10	Աստիճանական արթնացում	14.50 -15.10	14.50-15.10
11	Հետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ	15.10 -15.30	15.10 -15.30
12	Խաղեր, ինքնուրույն գործունեություն	15.30-16.30	15.30-16.30
13	Զբոսանքի նախապատրաստում զբոսանք. տուն ճանապարհել	16.30 -17.30	16.30 -17.30

ԿՐՏՍԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՑԱՆԿ

(ինգօրյա աշխատանքային շաբաթվա համար)

Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին և ավարտվում է օգոստոսի 31-ին: Պարապմունքներն անցկացվում են սեպտեմբերի 15–ից մինչև մայիսի 31-ը ներառյալ՝ մինչև 20 որպե տևողությամբ: Ծրագրային նյութի յուրացման համար հաշվետու ժամանակահատված է սահմանվում յուրաքանչյուր եռամսյակը:

Սեպտեմբերի առաջին երկու շաբաթը հարմարման փուլ է, ուստի հատուկ պարապմունքներ չեն անցկացվում: Խաղ-պարապմունքների միջև ընկած ժամանակահատվածը 15 ր է:

Ցանկալի է կանոնակարգային պահերի մեծ մասը կազմակերպել բակում:

Չորրորդ եռամսյակի համար նախատեսված չէ պարապմունքների բաշխման ցանկ, քանի որ պարապմունքներն անցկացվում են միայն ուսուցանված նյութի կրկնության ու ամրապնդման նպատակով:

Ամռան ամիսներին անցկացվում են կոփիչ միջոցառումներ:

Բաց թողնված ծրագրային ծավալը կարող է լրացվել չորրորդ եռամսյակում:

Կրտսեր երկրորդ խմբում կազմակերպվող պարապմունքների քանակը՝ ըստ ամիսների և տարվա կտրվածքով.

N	Պարապմունքի տեսակները	Պարապմունքների քանակը
1.	Խոսքի զարգացում	2 պարապմունք
2.	Ինձ շրջապատող աշխարհը	2 պարապմունք
3.	Մաթեմատիկական տարրական պատկերացումներ	1 պարապմունք

4.	Նկարչություն	1 պարապմունք
5.	Ծեփակերտում	1 պարապմունք
6.	Կառուցողական աշխատանք, ապլիկացիա	0,5 պարապմունք 0,5 պարապմունք
7.	Ֆիզիկուլտուրա	2 պարապմունք
8.	Երաժշտություն	2 պարապմունք
9.	Ընդամենը՝	12 պարապմունք

Պարապմունքի տեսակները	**Ըստ ամիսների**	**Տարվա կտրվածքով**
1. Խոսքի զարգացում	8	72
2. Ինձ շրջապատող աշխարհը	8	72
3. Մաթեմատիկական տարրական պատկերացումներ	4	36
4. Նկարչություն	4	36
5.Ապլիկացիա/ կառուցողական աշխատանք	4	36
6. Ծեփակերտում	4	36
7 Ֆիզկուլտուրա	8	72
8. Երաժշտություն	8	72

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Կրտսեր 2-րդ խմբում «Խոսքի զարգացում» ծրագրային բաղադրիչի նպատակներն են՝

- առաջացնել սեր մայրենի լեզվի նկատմամբ,
- զարգացնել խոսքային լսողությունը, ճիշտ հնչարտաբերումը,
- ձևավորել մեծահասակների և հասակակիցների հետ խոսքային հաղորդակցման պահանջմունք,
- նպաստել դաստիարակի և հասակակիցների հետ անկաշկանդ շփմանը,
- նպաստել խոսքի արտահայտչականության ձևավորմանը:

Հիմնական խնդիրներն են՝

- նպաստել բառապաշարի հարստացմանն ու ակտիվացմանը,
- նպաստել խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակմանը,
- ձևավորել խոսքի քերականական կառուցվածքը,
- զարգացնել կապակցված խոսքը,
- ծանոթացնել գեղարվեստական գրականությանը:

Բառապաշարի հարստացում և ակտիվացում

Այս տարիքում կարևորվում է շրջապատող միջավայրի առարկաների անվանումներով սաների բառապաշարի հարստացումն ու ակտիվացումը: Դրա համար անհրաժեշտ է՝

- սովորեցնել ընկալել բառի իմաստը:
- դրսևորել բառակազմության տարրական կարողություններ՝ բառերին ավելացնելով «փոքրացնող» վերջածանցներ (փիսիկ, շնիկ):
- ակտիվացնել բառապաշարը խոսքի տարբեր մասերով՝ ածականներ, բայեր, մակբայեր:
- հստակեցնել հագուստի, կոշկեղենի, սպասքի պարագաների, կահույքի, տրանսպորտի միջոցների և այլ առարկաների անվանումները և նշանակությունը:
- սովորեցնել հասկանալ ընդհանրացնող բառեր (հագուստ, սպասք, կահույք, բանջարեղեն, միրգ, գազան, թռչուն), անվանել օրվա մասերը (առավոտ, կեսօր, երեկո, գիշեր), անվանել ընտանի կենդանիներին և նրանց ձագերին, մրգերը և բանջարեղենը,
- սաներին սովորեցնել տարբերել և անվանել առարկաների առանձին մասերը (զգեստի թևքերը, օձիքը, գրպանները, կոճակները), որակը, գույնը ձևը, չափսը, արտաքին մակերևույթի առանձնահատկությունը (խորդուբորդ, հարթ, թավշյա), ճանաչել մի քանի նյութեր և դրանց հատկությունները (թուղթը հեշտորեն պատռվում և թրջվում, ապակե իրերը ջարդվում են, ռետինե իրերը սեղմվելուց հետո ընդունում են իրենց նախկին ձևը), որոշել առարկայի գտնվելու տեղը (պատուհանից այն կողմ, բարձր, հեռու, պահարանի տակ և այլն):

  Սաների ուշադրությունը հրավիրել նշանակությամբ իրար մոտ իրերին (բաժակ-գավաթ, աթոռ-նստարան, մուշտակ-վերարկու):

4 տարեկանում երեխայի բառապաշարում պետք է լինի 1500-2000 բառ:

Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում

Կրտսեր նախադպրոցական տարիքում ճիշտ հնչարտասանությունը հանդիսանում է խոսքի զարգացման առաջատար ուղղությունը: Խոսքի հնչյունային կուլտուրայի մեջ առանձնացվում են հետևյալ բաղադրիչները՝

- ✓ խոսքաշարժողական ապարատի զարգացում,
- ✓ հնչարտաբերման զարգացում,
- ✓ խոսքային լսողության զարգացում,

- ✓ խոսքային շնչառության զարգացում:

Կրտսեր երկրորդ խմբում սաներն աստիճանաբար յուրացնում են մայրենի լեզվի հնչյունները. արտասանում են ձայնավոր և համեմատաբար պարզ բաղաձայն հնչյունները. դժվարություններն արտահայտվում են դրանք բաց թողնելով կամ այլ հնչյուններով փոխարինելով: Բառի արտասանության ընթացքում ընդգծելով այս կամ այն հնչյունը՝ երեխան սկսում է յուրացնել նաև «հնչյուն» և «բառ» տերմինները:

Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակման համար անհրաժեշտ է՝

- զարգացնել խոսքաշարժողական ապարատը, խոսքային լսողությունը և խոսքային շնչառությունը: Ճշտել և ամրապնդել հնչյունների արտաբերումը: Մշակել խոսքի արտասանության ճիշտ տեմպ, հնչերանգային արտահայտչականություն:
- Սովորեցնել հստակ արտաբերել բառերը և կարճ արտահայտությունները, խոսել հանգիստ, բնական արտահայտչականությամբ, տրված հնչյուններն արտասանել երկարացնելով, ավելի բարձր, հստակ, քան արտասանվում է առօրյա խոսակցության ժամանակ:
- Ճշտել և ամրապնդել ս, զ, ց, շ, ժ, չ, ձ ,ց, լ, ր, ռ, մ, ն, գ, կ, ք, դ, տ, թ հնչյունների արտասանությունը: Հասնել մայրենի լեզվի բոլոր հնչյունների ճիշտ արտասանությանը:
- Բացատրել, որ բոլոր բառերը կազմված են հնչյուններից, որոնք արտասանվում են որոշակի հաջորդականությամբ:
- Շարունակել սաներին սովորեցնել՝ բառերի մեջ հստակ արտասանել ձայնավոր (է, ա, ի, ու, օ, ը,) և որոշ բաղաձայն (բ-փ, դ-թ, գ-ք, վ-ֆ, զ-ս) հնչյունները:
- Սովորեցնել տարբերակել հնչարտասանությամբ նման բառերը (տուն, շուն և այլն):

Խոսքի քերականական կառուցվածքի ձևավորում

Այս տարիքային խմբում խոսքի զարգացման գործընթացում ծանրակշիռ դեր ունի քերականական կողմի ձևավորումը: Անհրաժեշտ է՝

- սաներին սովորեցնել շարահյուսորեն ճիշտ կազմել նախադասությունները,
- սաներին սովորեցնել բայերը թվով, դեմքով, ժամանակով համաձայնեցնել գոյականների հետ, ճիշտ կիրառել օժանդակ բայերը,
- օգնել սաներին՝ խոսքում կիրառել գոյական անուններ եզակի և հոգնակի թվով, փաղաքշական մասնիկների միջոցով անվանել կենդանիների ձագերին/ հավ-հավիկ, բադ-բադիկ, շուն- շնիկ և այլն/,
- սովորեցնել պարզ նախադասություններից/ ենթակա, ստորոգյալ/ կազմել պարզ ընդարձակ նախադասություններ՝ ավելացնելով շաղկապներ, մակբայեր և այլն/: Օգնել՝

պարզ նախադասությունը վերածել պարզ ընդարձակ նախադասության, /նույն խոսքի մասին պատկանող/ բառերով կազմել նախադասություն,

- սովորեցնել կազմել հարցեր՝ կիրառելով «ո՞վ», «ի՞նչ» «որտե՞ղ», «ե՞րբ», «ինչու՞» բառերը.
- սովորեցնել խոսքում կիրառել տեղի մակբայեր՝ տակ, վրա, մեջ,մոտ հետևում,առջևում և այլն:

Կապակցված խոսքի զարգացում

Խոսքի զարգացման խնդիրների միասնությամբ է պայմանավորված կապակցված խոսքի զարգացման հաջող գործընթացը: Այն իրենից ենթադրում է մենախոսության և երկխոսության զարգացում: Այս համատեքստում անհրաժեշտ է՝

- զարգացնել սաների նախաձեռնողական խոսքը,
- ձևավորել հասակակիցների և ծանոթ մեծահասակների հետ տպավորությունները կիսելու պահանջմունք (*«ի՞նչ է», «որտե՞ղ է տեսել», «ինպիսի՞ն էր»* և այլն),
- ձևավորել հասակակիցների և մեծահասակների հետ հաղորդակցության մեջ մտնելու, երկխոսելու կարողություն՝ կիրառելով բարեկիրթ դիմելաձևեր միմյանց,
- սովորեցնել լսել և հասկանալ տրված հարցը, հասկանալի կերպով դրան պատասխանել, խոսել հանգիստ տոնով՝ չընդհատելով զրուցակցին,
- սովորեցնել սաներին վերապատմել ծանոթ հեքիաթից տպավորիչ ու հետաքրքրական դրվագներ, սկզբում դաստիարակի հարցերով, այնուհետև՝ ինքնուրույն,
- սովորեցնել սաներին լսել փոքրիկ պատմվածքներ՝ դրսևորելով համապատասխան հուզական արձագանք,
- սովորեցնել հուշող հարցերի օգնությամբ վերարտադրել լսածը,
- սովորեցնել ընկալել նկարի բովանդակությունը և ուղղորդմամբ 3-4 նախադասությամբ վերարտադրել այն:

Ծանոթացում գեղարվեստական գրականությանը

Գեղարվեստական գրականության ծանոթացմամբ սանը ձեռք է բերում աշխարհաճանաչման առաջին փորձը, որի ընթացքում լուծվում են գեղագիտական, բարոյական, մտավոր աշխատանքային, սեռական դաստիարակության մի շարք խնդիրներ: Անհրաժեշտ է՝

- Դաստիարակել հետաքրքրություն գեղարվեստական գրականության, գրքի, նկարազարդումների հանդեպ հանդեպ

- Զարգացնել տարբեր ժանրերի ստեղծագործություններն մինչև վերջ լսելու, ամբողջական ընկալելու, հարցերին պատասխանելու ունակություն:
- Ապահովել ստեղծագործության բովանդակության յուրացումը, զարգացնել դրան հուզականորեն արձագանքելու կարողություն:

Երեխաների խոսքի զարգացման պարապմունքների կազմակերպման համար, ինչպես նաև առօրյա գործունեության ընթացքում առաջարկվում է գեղարվեստական ստեղծագործությունների հետևյալ ցանկը: Այն ուղեցույց է դաստիարակի համար և ենթակա է լրացման՝ ելնելով երեխաների զարգացման մակարդակից և իրականացվող միջոցառումների բովանդակությունից:

Պատմելու և ընթերցելու համար՝ «Ուլիկը»/Հովի. Թումանյան/, «Նապաստակը առյուծի պալատում» /Ս.Մուրադյան/, «Նապաստակն ու բադը» /Ս.Մուրադյան/,« Գայլն ու աղվեսը»/Ս.Մուրադյան/, «Երեք արջի հեքիաթը» /Լև Տոլստոյ/, «Խաղալիքները» /Ա.Բարտո/, «Շնիկ, այն էլ ի՞նչ շնիկ»/Հ. Մելյան/, «Մաշան ճաշում է» /Ս. Կապուտիկյան/, «Տոնածառն անտառում» /Ա. Մովսիսյան/,«Թե ինչպես Ձմեռ պապիկը հալվեց»/Ս. Մուրադյան/, «Մեր բանակը» /Ա. Մովսիսյան/, «Թե ինչ պատահեց, երբ իշուկը չուզեց վերարկու հագնել» /գերմա-նական ժող.,հեքիաթ/, «Այոն ու ոչը» /Հ.Հայրապետյան/,«Աղջիկն ու արջը» /ռուսական.ժող. հեքիաթ/,«Ձեռնոցները» /Ս.Մարշակ/,«Երեք արջի հեքիաթը» /Լ.Տոլստոյ/, «Աղջիկն ու սունկերը» /Լ.Տոլստոյ, «Աղվեսը, նապաստակը և աքլորը» /ռուս. ժող. հեքիաթ/, «Փիսիկի գնդակը» /Ռ.Ղարիբյան/, «Ձատիկ» / հայկական ժող. տոն/, «Լալկան աղջիկը» /Բարտո/,«Աղջիկն ու ծաղիկները» / Ա. Մովսիսյան/, «Բարև, արջուկ» /Էդ. Ավագյան/, «Գյուլնազ տատի թոռները» /Ղ.Աղայան,. «Ոսկեմազիկը» /Մ.Կլոկովա/, «Ծիվծիվն ու ճիվճիվը» /Հ.Հայրապետյան/,«Ուլիկը» /Ա.Ճուղուրյան/, «Ես արդեն մեծ եմ» Լ. Պողոսյան:

Արտահայտիչ արտասանություն՝ «Սագիկ» /Ղ. Աղայան/,«Բկլիկ ձկնիկ » /Ա. Խնկոյան/, «Այս բոլորին»/Հ. Հայրապետյան /,«Բադիկ» /Ռ.Պատկանյան,. «Ընկերասերը» /Ս. Մուրադյան/,«Իմ գնդակը» /Ս. Մուրադյան/,«Իմ շնիկը» /Ավ. Ճուղուրյան/, «Գնացքը» /Ս. Կապուտիկյան/,«Մուկն ու կատուն» /Հ. Աղաբաբ/, «Արև-արև ե՛կ, ե՛կ» /Ղ. Աղայան/, «Աղվեսն ու սագը»/մշակումը՝ Ս. Կապուտիկյանի/,. «Համոն» /մշակումը՝ Էդ. Ավագյանի/,«Նավակը» /Գ. Մովսիսյան/, «Թիթեռ» /Վ.Վարդունի, «Մեծացել եմ» /Ե. Պետրոսյան/,«Ձմեռ պապի»/Ա. Խնկոյան/, «Ձյունը» /Հ. Հայրապետյան/, «Ձմեռ»/Աթ.Խնկոյան/, «Մեծ և փոքր» /Լ.Պողոսյան/, «Հացթուխը»/Ս.Մուրադյան/, «Ժամացույցը» /Ս.Կապուտիկյան/, «Իմ տիկնիկը» (Վ. Վարդանյան),«Ոսկե ձվիկը» /ռուսական հեքիաթ, «Որ մեծանամ» /Ս.Կապուտիկյան, «Կատուն» /Էդ. Միլիտոնյան/, «Խնդիր»/Գ.Գաբրիելյան/, «Բողբոջը» /Է. Ավագյան/ «Արտուտիկ» /Հովի.Թումանյան/, «Մանուշակ» /Ղ.Աղայան/, «Մեղու» /Ներսես Շնորհալի/,«Ծաղիկներ» /Հովի. Թումանյան/,«Ծիծեռնակ» /Աթ. Խնկոյան/, «Ձնծաղիկ» /Ն.Հովնաթան/, ,«Ձնծաղիկ» /Հ.Հայրապետյան/, «Մայր ճնճղուկը», «Ինչու եմ փոքրիկ» /Լ.

Պողոսյան/,«Իմ տատին» /Ս.Կապուտիկյան/,«Մանուկներն ու սագը»/Հովի. Շիրազ,«Պարտեզ» /Ս.Կապուտիկյան/,«Ես թիթեռ եմ»/Հ. Պողոսյան/,«Մայիս» /Վ. Վարդանյան/,«Գարուն» /Վ. Վարդանյան/,«Ջուր տվեք ինձ»/Պ Խաչատրյան/ :

Վերապատմում՝ «Թե ինչու կատուն միայն նախաճաշից հետո է լվացվում» / լիտվական ժող. հեքիաթ/, «Ուլիկը» /Հովի. Թումանյան/,«Նապաստակը առյուծի պալատում» /Ս.Մուրադյան/,«Նապաստակն ու բադը» /Ս.Մուրադյան/,«Գայլն ու կոշկակար նապաստակը» /Ս.Մուրադյան/, «Գայլն ու աղվեսը»/ Ս.Մուրադյան/,. «Թե ինչպես Ձմեռ պապիկը հալվեց»/Ս. Մուրադյան/,«Թե ինչ պատահեց, երբ իշուկը չուզեց վերարկու հագնել»/ գերմանական ժող., «Ով աշխատի, նա կուտի»/ ռուսական ժող. հեքիաթ/,«Ծիվծիվն ու ճիվճիվը» /Հ.Հայրապետյան/, «Ուլիկը» /Ա.Ճուղուրյան/, «Բարև, արջու՛կ» /Էդ. Ավագյան/

Ստեղծագործական պատմումներ՝ «Իմ սիրելի խաղալիքը», «Աշուն», «Իմ շնիկը», «Ձմեռ», «Նոր տարի»,«Իմ մանկապարտեզը», «Գարուն է», «Մայրիկների տոնը», «Կենդանաբանական այգում ,«Ես ապրում եմ Երևանում»:

Լրացուցիչ գրականություն՝ «Լավաշը» /Հ. Խաչատրյան/,«Ծիտը» Հ. Թումանյան«Հացը» Պ. Խաչատրյան, «Աշխատասեր հավիկը»/ ռուսական ժողովրդական հեքիաթ/, «Գնդիկ բոքոնիկը/» ռուսական ժողովրդական հեքիաթ:

Զարգացնող խոսքային միջավայր

Խոսքի ակտիվացմանը նպաստում է մանկավարժական պահանջներին համապատասխան զարգացնող խոսքային միջավայրը՝ շփումը հասակակիցների և մեծահասակների հետ: Այն օժանդակում է սաների խոսքի՝ որպես հաղորդակցման միջոցի կատարելագործմանը:

Վերջնարդյունքներ (Հապավում՝ ԽՁ)
1. արտասանի մայրենի լեզվի բոլոր հնչյունները՝ պահպանելով խոսքի ուժգնությունը, հնչերանգը, 2. տարբերակի նույն հնչողությամբ կամ հանգավորմամբ բառեր, 3. տիրարապետի բառակազմության տարրական կարողություններին, 4. ճիշտ օգտագործի խոսքի տարբեր մասերը, 5. ճիշտ ձևակերպի հարցեր, 6. պատասխանի հարցերին, 7. լրացնի նախադասության մեջ բաց թողնված բառը, 8. ընտրի համապատասխան բառեր անավարտ միտքը լրացնելու համար, 9. կիրառի խոսքում պարզ ընդարձակ և համառոտ նախադասություններ, 10. ներկայացնի կիսատ թողած պատմության շարունակությունը, 11. 3-4 նախադասությամբ վերապատմի հեքիաթը, փոքրիկ պատմվածքը, 12. նկարագրի նկարի բովանդակությունը որոշակի ուղղորդմամբ,

13. ձևակերպի և արտահայտի սեփական մտքերը,
14. կատարի պարզ հրահանգներ և առաջադրանքներ,
15. հաղորդակցվի ծանոթ մեծահասակների հետ,
16. զրուցի իրեն ծանոթ հասակակիցների հետ,
17. օգտագործի գրելու կամ նկարելու պարագաներ,
18. բացատրի առարկաների նշանակությունը,
19. հետևի վարքի կանոններին,
20. մասնակցի խաղերին և խաղային իրավիճակներին,
21. մասնակցի 15-20 րոպե տևողությամբ տարբեր աշխատանքներին,

Բովանդակություն

Հեքիաթ, պատմվածք, բանաստեղծություն, առակ, հանելուկ, շուտասելուկ.

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային.

- Խաղեր
- Պարապմունքներ՝ (դիդակտիկ խաղ, զրույց, հնչարտաբերման դիդակտիկ վարժությունները, հեքիաթի, պատմվածքի, ունկնդրում, հեքիաթի պատմում դաստիարակի, օգնությամբ, ոտանավորի, հանելուկի ունկնդրում, արտահայտիչ արտասանություն,խաղ-բեմականացումներ).
- Տոներ, միջոցառումներ.
- Բեմականացում, թատրոն.
- Ինքնուրույն գործունեություն.
- Աշխատանք կենտրոններում.
- Աշխատանք բնության անկյունում, պարտեզում, հերթապահություն:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝

Շ- (ա), (ժ), (թ), ԽՀ - (դ), (ժ), (թ), Ի - (ա), (բ), (գ), (ե), (զ), (է), (թ), ՀՍԱ - (ա), (բ), (գ), (դ), (ե), (զ), ԻԱԱ -(ա), (բ), (դ), (ե)

ԻՆՁ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԱՇԽԱՐՀԸ

Կրտսեր երկրորդ խմբի 3-4 տարեկանների կրթական ծրագրում առանձնակի տեղ է հատկացված «Ինձ շրջապատող աշխարհը» ծրագրային բաղադրիչին, որի նպատակներն են ՝

- ✓ նպաստել իմացական գործընթացների, ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը:
- ✓ Զարգացնել հաղորդակցական հմտությունները:
- ✓ Հաղորդել տարրական գիտելիքներ սեփական անձի, ընտանիքի, հայրենի երկրի, իրեն շրջապատող առարկաների, կենդանական, բուսական աշխարհի, անկենդան բնության, բնության մեջ տեղի ունեցող եղանակային փոփոխությունների մասին:
- ✓ Դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ:
- ✓ Ձևավորել համապատասխան վերաբերունք շրջակա միջավայրի հանդեպ:

Ծրագրային այս բաղադրիչի խնդիրներն են՝

- ✓ զարգացնել սեփական անձի, ընտանիքի անդամների մասին պատկերացումները,
- ✓ ընդլայնել պատկերացումները սաներին շրջապատող իրերի (խաղալիքներ, կահույք, սպասք, հիգիենիկ պարագաներ, տրանսպորտ) մասին,
- ✓ ընդլայնել անձնական հիգիենայի մասին կարողություններ,
- ✓ զարգացնել ինքնասպասարկման հմտություններ,
- ✓ ընդլայնել հիմնական հույզերի մասին պատկերացումները,
- ✓ ձևավորել պատկերացումներ որոշ մասնագիտությունների մասին,
- ✓ ծանոթացնել ընտանի և վայրի կենդանիներին և նրանց ձագերին, նրանց սնվելու և վարքի առանձնահատկություններին, բնության անկյան բնակիչներին, ակվարիումի բնակիչներին, թռչուններին,
- ✓ ձևավորել պատկերացումներ միջատների մասին ,
- ✓ սովորեցնել՝ արտաքին տեսքով տարբերել և անվանել բանջարեղենը, մրգերը, հատապտուղ-ները ,
- ✓ ծանոթացնել շրջապատում հանդիպող ծառերին, սենյակային բույսերին,
  - ✓ սկզբնական գիտելիքներ հաղորդել բույսերի աճման համար անհրաժեշտ պայմանների մասին,
  - ✓ հաղորդել տարրական գիտելիքներ տարվա եղանակների , դրանց հերթագայությամբ պայմանավորված բնության սեզոնային փոփոխությունների և մարդկանց կյանքում կատարվող փոփոխությունների մասին,
  - ✓ պատկերացում տալ ջրի, հողի, անձրևի, ձյան, քամու հատկությունների մասին,
  - ✓ ձևավորել բնության տարրերի պատճառահետևանքային տարրական կապերը հասկանալու կարողություն,

✓ բնության մեջ ճիշտ վարքագիծ դրսևորելու կարողություն:

Վերջնարդյունք (Հապավում՝ ԻՇԱ)
1. Իմանա իր անունն ու ազգանունը, իր մասին խոսի առաջին դեմքով, 2. ունենա պատկերացումներ ուրիշների մասին, ճանաչի ընտանիքի անդամներին,հասակակիցներին, ընկերներին, 3. խոսի իր նվաճումների մասին, 4. ճանաչի հիմնական հույզերը, 5. ճանաչի և անվանի որոշ հիգիենիկ պարագաներ, 6. ինքուրույն կիրառի հիգիենիկ պարագաները, 7. ճանաչի և անվանի սպասքի որոշ տեսակներ, 8. օգտվի սպասքից, 9. ինքնուրույն հանի և հագնի հագուստի որոշ տեսակներ, 10. ճանաչի և անվանի կահույքի որոշ տեսակներ, 11. ճանաչի և անվանի տրանսպորտի որոշ տեսակներ, 12. մեծահասակի հիշեցմամբ պահպանի անվտանգության կանոնները, 13. իմանա որոշ մասնագիտություններ, 14. ճանաչի և անվանի մրգերը (խնձոր, տանձ ծիրան, դեղձ, բանան, սալոր), 15. ճանաչի, անվանի բանջարեղենը /լոլիկ, վարունգ, պղպեղ, գազար/ , 16. տարբերակի միրգն ու բանջարեղենը ըստ արտաքին տեսքի և համի, 17. ճանաչի և ավանի ծաղիկները (վարդ, կակաչ, մանուշակ և այլն), 18. ճանաչի ծառերի տեսակները և կառուցվածքը, 19. ճանաչի թռչուններին, տարբերի ` ըստ իրենց արտաքին տեսքի /աղավնի, հավ, թութակ/ 20. ճանաչի և անվանի որոշ կենդանիների, նրանց ձագերին, 21. ներկայացնի կենդանիների օգտակարությունն ու նշանակությունը մարդու համար/ շուն,կատու, ճագար, կով/ 22. ճանաչի և անվանի որոշ միջատների, 23. ճանաչի տարվա եղանակները և բնության որոշ երևույթներ (անձրև, քամի, ձյուն), 24. անվանի և ճանաչի բնության տարրերը՝ ջուր, օդ, արև և այլն, 25. ընկալի բնության երևույթների պատճառահետևանքային տարրական կապերը (եթե բույսը չջրվի, այն կարող է թոշնել, ամպերը կուտակվում են անձրև է գալու և այլն), 26. նկատի, բնության գեղեցկությունը, 27. դրսևորի հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ, 28. դրսևորի ճիշտ վարքագիծ բնության գրկում:
Բովանդակություն
«Ես և իմ ընտանիքը» «Մանկապարտեզում» «Խաղալիքների աշխարհում» «Ուրախ, տխուր և բարկացած մարդուկներ»

«Հագուստ» «Սպասք» «Կահույք» «Կենդանիներ» «Ծաղիկներ, ծառեր» «Մրգեր» «Բանջարեղեն» «Թռչուններ» «Միջատներ» «Բնության երևույթներ» «Ձուր» «Արև» «Գույների աշխարհում» «Մասնագիտություն» «Փողոց, լուսակիր» «Տրանսպորտ»
Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային - Խաղեր. - Պարապմունքներ. - Աշխատանք բնության անկյունում, այգում, բանջարանոցում. - Աշխատանք կենտրոններում. - Փորձարարություն. - Զբոսանք, էքսկուրսիա. - Փորձարարություն. - Տոներ, միջոցառումներ:
Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ Շ -(ա), (բ),(ը), ԽՀ - (ա), (դ),Ի -(ա),(բ), (գ),(ե), (զ), ՀՍԱ -(բ), (ե),(զ), ԻՍԱ - (ա), (գ) , (ե)

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ

Այս տարիքային խմբում «Մաթեմատիկական տարրական պատկերացումներ» ծրագրային բաղադրիչի նպատակներն են՝

- նպաստել իմացական գործընթացների, ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը,
- զարգացնել հաղորդակցական հմտությունները,
- հաղորդել մաթեմատիկական նախաթվային և թվային նախագիտելիքներ:

Ծրագրային բաղադրիչն իր մեջ ընդգրկում է առարկաների մեծության, ձևի, քանակի, առարկաների միջև գոյություն ունեցող հիմնական տարածական, ժամանակային և քանակական հասկացությունների մասին տեղեկություններ:

Ծրագրային բաղադրիչն իր մեջ ներառում է հետևյալ բաժինները.

Նախաթվային՝

- մեծություն
- ձև
- տարածության մեջ կողմնորոշում
- ժամանակի մեջ կողմնորոշում

Թվային՝

- քանակ:

Ծրագրի յուրաքանչյուր բաժնում ընդգրկված են տարբեր բնույթի և բարդության ծրագրային խնդիրներ:

Խնդիրներն են՝

- ձևավորել մաթեմատիկական տարրական նախաթվային պատկերացումներ՝ մեծություն, ձև և տարածության ու ժամանակի մեջ կողմնորոշում.
  - ✓ կարողանալ տարբերել և խմբավորել առարկաների խմբերն ըստ ընդհանուր հատկանիշների՝ գույնի, ձևի, չափի,
  - ✓ սովորեցնել կազմել միատեսակ առարկաների խմբեր, խմբից առանձնացնել մեկ առարկա
  - ✓ ձևավորել առարկաների 2 խմբերը համեմատելու հմտություն,
  - ✓ ձևավորել տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու կարողություն.
- ձևավորել մաթեմատիկական տարրական թվային պատկերացումներ՝ քանակ
  - ✓ շրջապատում գտնել միատեսակ, շատ և մեկ առարկա,
  - ✓ ձևավորել «շատ», «մեկ», «ոչ մի», բառերի և «որքա՞ն է» հարցադրման իմաստը հասկանալու կարողություն,
- ձևավորել դիդակտիկ նյութերով աշխատելու ցանկություն,
- նպաստել ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը,
- ստեղծել մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորման համար բարենպաստ պայմաններ,
- զարգացնել երեխաների ինքնուրույն գործունեությունը:

***Մեծություն*(չափ) -** Սաներին ծանոթացնել «մեծ», «փոքր», «հավասար» հասկացություններին, տարբերել առարկաները ըստ չափի, մեծության: Տարբեր եղանակներով համեմատել 2 առարկա:

Առարկաների միջև հարաբերությունները ցույց տալու համար օգտագործել հետևյալ հասկացությունները.

- ✓ մեծ, փոքր, չափով հավասար,
- ✓ երկար, կարճ, երկարությամբ հավասար,
- ✓ բարձր, ցածր, բարձրությամբ հավասար,
- ✓ լայն, նեղ, լայնությամբ հավասար,
- ✓ հաստ, բարակ, հաստությամբ հավասար:

Երկարություն- Ծանոթացնել «երկար» «կարճ» «երկարությամբ հավասար» հասկացություններին: Տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների երկարությունը:

Բարձրություն **-**Ծանոթացնել «բարձր», «ցածր», «բարձրությամբ հավասար» հասկացություններին: Տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների բարձրությունը:

Լայնություն- Ծանոթացնել «լայն», «նեղ», «լայնությամբ հավասար» հասկացություններին: Տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների լայնությունը:

Հաստություն- Ծանոթացնել «հաստ» «բարակ», «հաստությամբ հավասար» հասկացություններին: Տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների հաստությունը:

Ձև -Ձևավորել տարրական պատկերացումներ երկրաչափական մարմինների և պատկերների մասին՝ խորանարդ, գունդ, բուրգ , քառակուսի, եռանկյուն և շրջան:

Տարածության մեջ կողմնորոշում- *Սաներին ծանոթացնել տարածական հիմանական հասկացություններին՝ կողմնորոշվելով սեփական մարմնի դիրքով՝ աջ, ձախ, վերև, ներքև, առաջ, հետ, հեռու, մոտ, վրա, տակ:*

Ժամանակի մեջ կողմնորոշում- *Երեխաներին ծանոթացնել օրվա «առավոտ», «կեսօր», «երեկո», «գիշեր» մասերին:*

Քանակ *Տարիքային այս խմբում մաթեմատիկական տարրական պատկերացումների զարգացման աշխատանքներն ուղղված են բազմությունների համեմատմանը, համադրմանը, խմբավորմանը՝ օգտագործելով «շատ է», «քիչ է, «այնքան , որքան» արտահայտությունները:*

Միատեսակ և տարբեր առարկաներից կազմել խմբեր: Տարբերել «շատ, «մեկ,«ոչ մի, բառերի իմաստը: Պատասխանելիս օգտվել համապատասխան բառերից, հասկանալ «որքա՞ն է» հարցադրման իմաստը: Շրջապատում գտնել միատեսակ, շատ և մեկ առարկա:

Վերջնարդյունքներ (ՀԱՊԱՎՈՒՄ՝ ՄՏՊ)
1.Ընկալի շատ, քիչ, այնքան, որքան, մեծ, փոքր, չափով հավասար, երկար, կարճ, երկարությամբ հավասար, բարձր, ցածր, բարձրությամբ հավասար, լայն, նեղ, լայնությամբ հավասար, հաստ, բարակ, հաստությամբ հավասար հասկացությունների իմաստը, 2.ճանաչի երեք հիմնական գույները (կարմիր, կապույտ, դեղին) և մի քանի բաղադրյալ գույն (կանաչ, շագանակագույն, նարնջագույն, վարդագույն, մանուշակագույն), 3.ճանաչի և անվանի պարզ երկրաչափական մարմիներ և պատկերներ (գունդ, խորանարդ, բուրգ, շրջան, քառակուսի, եռանկյուն) 4.համեմատի առարկաներն առդրման և վերդրման ճանապարհով,

5.համեմատի և համադրի առարկաները՝ ըստ 1 հատկանիշի (գույնի, չափի կամ ձևի), 6.խմբավորի միատեսակ առարկաներ, 7. տարբերակի աջ, ձախ, առաջ, հետ, վերև, ներքև, հեռու, մոտ, վրա, տակ բառերի իմաստը, 8.հասկանա առավոտ, գիշեր հասկացությունները՝ կապելով դրանք իր գործողությունների հետ, 9.կատարի համրանք 1-5 սահմանում, 10 ընտրի շրջապատում միատեսակ շատ և մեկ առարկա, 11.առանձնացնի խմբից մեկ առարկա, 12.մտապահի և վերարտադրի ներկայացված որոշակի տեղեկատվությունը, 13.տարբեր նյութերով աշխատելու տարրական հմտություններին:
Բովանդակություն Ծանոթացում երկրաչափական մարմիներին և պատկերներին Ծանոթացում առարկայի հատկանիշներին Ժամանակային պատկերացումներ Տարածական պատկերացումներ «Մեկ», «շատ», «ոչ մի» քանակական հասկացություններ Ուղիղ և հետ հաշիվ 1-5 սահմանում
Գործունեության ձևեր՝ - Խաղեր - Պարապմունքներ - Էքսկուրսիա, զբոսանք. - Աշխատանք կենտրոններում. - Ինքնուրույն գործունեություն. - Տոներ և միջոցառումներ.
Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ Ի(ա), (ե), (զ),(է), ՀՍԱ (ա), (բ), (գ),(դ)

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Անձի տարիքային զարգացման ոչ մի շրջանում ֆիզիկական դաստիարակությունը այնպես ցայտուն չի ներգործում առողջության, ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստվածության, ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման և սոցիալականացման վրա, ինչպես նախադպրոցական տարիքում:

Նախադպրոցականի ֆիզիկական կուլտուրան ոչ միայն մկանային վարժություն է, հիգիենիկ հմտությունների և առողջության ամրապնդում, այլև զգացմունքի, ուշադրության, կամքի, գեղեցկության արտահայտության, որը հանրագումարային ցույց է տալիս երեխայի բազմաբնույթ կուլտուրան:

Անկասկած, դրանք այն հիմնական բաղադրիչներն են, որոնց վրա հենվելով իրականացվում է սանի բազմակողմանի դաստիարակությունը՝ մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային, էկոլոգիական և այլն: Ֆիզիկական դաստիարակության բազմազան միջոցների արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ է կիրառել համակողմանի մոտեցում, կանոնավոր համագործակցել ծնողների հետ:

Նման հայեցակարգային դրույթները առաջադրում են նպատակաուղղված ամրապնդել երեխաների առողջությունը բարձրացնել ֆունկցիոնալ և ֆիզիկական պատրաստվածության մակարդակը:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

- առողջության ամրապնդումը ու պահպանումը, օրգանիզմի կոփումը և դիմադրողականության բարձրացումը, հենաշարժողական ապարատի ամրապնդումը, ճիշտ կեցվածքի ձևավորումը և հարթաթաթության կանխարգելումը, ֆիզիկական ներդաշնակ զարգացումը, օրգանիզմի ֆունկցիոնալ համակարգի բարելավումը,
- կենսականորեն անհրաժեշտ շարժողական կարողությունների և հմտությունների /քայլք, ցատկ, սողանցում, մագլցում,նետում / ձևավորում ինչպես նաև դրանց տեխնիկայի ճիշտ կատարում,
- շարժողական ընդունակությունների /արագաշարժության, դիմացկունության, մկանային ուժի, ճարպկության, հավասարակշռության,կոորդինացիայի/ մշակում,
- շարժախաղերի և մարզախաղերի տարրերի ուսուցում, խաղային գործողությունների ձևավորում, զարգացում,
- շնչառական և մանր մոտորիկայի զարգացման վարժությունների ուսուցում,
- տեսական գիտելիքների հաղորդում ֆիզիկական վարժությունների օգտակարության, ֆիզկուլտուրայի պատմության, օլիմպիական խաղերի, առողջ ապրելակերպի վերաբերյալ,
- անձի բարոյակամային դրական գծերի՝ ինքնուրույնության, ակտիվության, ընկերասիրության, համագործակցության դաստիարակում:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ֆիզիկական դաստիարակության

խնդիրների լուծումը պայմանավորված է սանի օրգանիզմի վրա տարբեր միջոցների միասնական ներգործությամբ, որոնց զուգակցումը կախված է նախադպրոցական ուսումնական հաստատության սաների առողջական վիճակից, ընտանեկան-կենցաղային պայմաններից, էկոլոգիայի, սեռի, անհատական և տարիքային առանձնահատկություններից:

Ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծման գործում էական նշանակություն ունեն նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունում հիգիենիկ բարենպաստ պայմանների ստեղծումը, բավարար չափով բաց օդում լինելը և, ամենակարևորը, երեխաների նկատմամբ դրսևորվող բարեխիղճ վերաբերումքը, հոգատարությունն ու խնամքը:

Սաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն իրարականացվում են ռեժիմի, սննդի, կուլտուր-հիգիենիկ ունակությունները ու հմտությունների, ինչպես նաև կոփման միջոցառումների փոխկապակցությամբ:

Սաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն իրականացվում են հիմնականում շարժողական նպատակային ռեժիմի պայմաններում, որի հիմքում ընկած են տարբեր ձևերով կազմակերպվող ֆիզկուլտուրային ամենօրյա միջոցառումները, սանի ազատ, ինքնուրույն շարժողական գործողությունը:

Սաները սովորում են վարքի կուլտուրա և այդ բոլորին պետք է տիրապետեն ու պարբերաբար կրկնեն, ամրապնդեն տարիքային հաջորդ խմբերում՝ որակական նոր կատարելությամբ:

Օրվա ընթացքում դաստիարակը կազմակերպում է խաղեր և վարժություններ տարբեր առարկաներով:

Ծրագրում տրված են նաև շարժողական ընդունակությունների մշակման, մարմնի ճիշտ կեցվածքի ձևավորման, հարթաթաթության կանխման և շնչառությունը կարգավորող վարժություններ, որոնք պետք է իրականացվեն մանկարապարտեզի ուսումնադաստիա-րակչական ամբողջ աշխատանքի ընթացքում:

Համաձայն ծրագրի՝ օրվա ընթացքում շարժողական ռեժիմը ապահովվում է մարմնամարզական վարժությունների և երաժշտառիթմիկ պարապմունքների միջոցով, ըստ որի առաջադրվող նյութը բովանդակում է սպորտային վարժությունների պարզ ձևեր, նմանողական շարժումներ, ազգային պարային շարժումների տարրեր և այլն:

Շարժողական ընդունակությունների մշակման և շարժողական կարողությունությունների ու հմտությունների զարգացման համար վարժություններն ընտրվում են՝ հաշվի առնելով սաների անհատական և տարիքային հնարավորությունները, պարապմունքների և առօրյա աշխատանքների կազմակերպման համար մանկապարտեզում ստեղծված պայմանները:

Առավոտյան մարմնամարզություն - Սկսած կրտսեր I խմբից՝ ծրագրով նախատեսվում է ամեն օր, մինչև նախաճաշ անցկացնել առավոտյան մարմնամարզություն:

Ծրագրով առաջարկվում է ամեն օր կատարել առավոտյան մարմնամարզություն, որի համալիրները պետք է կառուցվի ծանոթ, պարզ, մատչելի, դինամիկ, ուշադրությունը

կենտրոնացնող, համազարգացնող, նմանողական խաղային վարժություններից և պարային շարժումներից:

Ցերեկային քնից հետո սաներին արթնացնելու, օրգանիզմը թարմացնելու, ակտիվ գործունեության նախապատրաստելու նպատակով առաջարկվում է ամեն օր անցկացնել մարմնամարզական վարժություններ՝ երեխաների ծանոթ խաղ վարժություններից, պարային շարժումներից, որոնք զուգակցվում են օդալոգանքով (տևողությունը՝ 10-15 րոպե):

Շարժողական ռեժիմում սաների ինքնուրույն շարժողական գործունեությանը մեծ տեղ է հատկացված: Սանն ազատ ընտրում է իր նախասիրություններին համապատասխանող գործունեություն, որտեղ զարգանում է նրա ստեղծագործական ակտիվությունը: Սանն ինքնահաստատման հնարավորություն է ձեռք բերում: Դառնալով իրերի, գործողությունների, հարաբերությունների տեր, նա ինքնաճանաչողության որակ է ձեռք բերում, մշակվում են հասակակիցների հետ համագործակցելու ունակություններ:

Սաների ինքնուրույն շարժողական գուրծունեությունը պայմանավորված է ակտիվությունը խթանող բազմազան պարագաների առկայությունը բակում և շենքի ներսում: Առաջարկվում է լայնորեն օգտագործել ծանոթ, ժողովրդական շարժախաղեր, մարզական տարրերով խաղեր ու սպորտային վարժություններ: Սաների ֆունկցիոնալ հնարավորություններն ընդլայնելու, շարժողական կարողությունները զարգացնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել պարզագույն արշավներ, հեռավոր զբոսանքներ օգտվելով բնական արգելքներից:

Ֆիզիկական դաստիարակության աշխատանքներն ամփոփելու նպատակով ծրագրով առաջարկվում է անցկացնել ժամանցներ, մարմնամարզական հանդեսներ, մարզական-մասսայական, առողջության օր, տասնօրյակներ:

Ծրագրային նյութը բարդանում է տարիքային մի խմբից մյուսին անցնելիս: Ընդ որում, կարևորվում է նոր շարժումների տեխնիկայի յուրացումը և մանկական օրգանիզմի ֆիզիկական բեռնվածության աստիճանական բարձրացումը: Տարիքային յուրաքանչյուր խմբի համար տրված ուսուցման միայն նոր նյութը: Յուրացված կարողությունների ամրապնդման ու կատարելա-գործման, մարզական ընդունակությունների և աշխատունակության բարձրացման համար նախատեսվում է սպորտային վարժությունների և խաղերի, խաղային վարժությունների պարբերական կրկնություն՝ տարիքային բոլոր հաջորդող խմբերում, որակական նոր բարձրությամբ:

Ծրագիրն իրականացնելիս անհրաժեշտ է կարևորել հետևալ հանգամանքները.

1. Նպատակաուղղված մշակել շարժողական ընդունակությունները, որոնք էականորեն կնպաստեն հիմնական շարժողական գործողությունների արագ և տեխնիկապես ճիշտ տիրապետմանը,
2. հնարավորինս հաճախ ֆիզկուլտուրային պարապմունքները անցկացնել բացօթյա,
3. անհրաժեշտ է սովորեցնել երեխաներին գիտակցաբար հսկել սեփական շարժողական գործողությունների կատարման ընթացքը,

4. համավարակի պայմաններում անհրաժեշտ է պահպանել շարժողական ռեժիմը, մշտապես հանձնարարել տնային առաջադրանքներ որում պետք է ընդգրկված լինեն շնչառական և ընդհանուր դիմացկունությունը մշակող վարժություններ,
5. առանձնահատուկ ուշադրություն դարձնել տեսական գիտելիքների հաղորդմանը և դրանց կիրառմանը գործնականում:

Խնդիրները՝

1. Պահպանել և ամրապնդել սաների առողջությունը, կոփել օրգանիզմը, ամրապնդել որովայնի, մեջքի, պարանոցի, ուսագոտու, ոտքերի ներբանների մկանները նպաստելով ճիշտ կեցվածքի ձևավորմանը և հարթաթաթության կանխմանը:

2. Սովորեցնել հիմնական շարժողական գործողությունները (քայլք, վազք, ցատկ, մագլցում և այլն) տեխնիկապես (որակապես) ճիշտ կատարումը: Քայլել և վազել անկաշկանդ, ազատ, բնական շարժումներով, ճիշտ համակցելով ոտքերի և ձեռքերի շարժումները: Մագլցելիս հերթափոխել ձեռքերի և ոտքերի շարժումները:

3. Մշակել հավասարակշռություն, արագաշարժություն, ընդհանուր դիմացկունություն, ճարպկություն, կորդինացիա:

4. Շարժախաղերի և սպորտային վարժությունների ուսուցում: Ինքնուրույն խաղալ ընկերների հետ, փորձել համագործակցել:

5. Ուսուցանել ձեռքերով և դաստակներով կատարվող վարժությունները՝ գնդակով, օղով, մարզափայտով, դրոշակով:

6. Դաստիարակել ընկերասիրություն, համագործակցություն, կամք:

7. Խթանել սաների շարժողական ակտիվությանը, որ օրվա ընթացքում այն կազմի 10-ից 11 հազար քայլ:

Աշխատանքի Ձևերը	Կազմակերպման առանձնահատկությունները
1. Ուսուցում պարապմունքների միջոցով. Ֆիզիկական դաստիարակության պարապմունքներ	Շաբաթական 2 պարապմունք՝ 15-20 րոպե տևողությամբ
1.Ֆիզկուլտ-առողջարարական աշխատանքներ օրվա ընթացքում -Առավոտյան մարմնամարզություն -Շարժողական նախավարժանք ցերեկային քնից հետո, օդային և ջրային արարողություններ -ֆիզկուլտ – դադար	Ամեն օր, 5-6 րոպե տևողությամբ Ամեն օր 5-8 րոպե Ըստ անհրաժեշտության՝ պարապմունքների ընթացքում 1-3 րոպե Ամեն օր

-Բացօթյա ֆիզիկական վարժություններ և շարժախաղեր -Զբոսանքներ, արշավներ	Ամիսը մեկ անգամ՝ 30-40 րոպե
2. Ինքնուրույն շարժողական գործողունեություն	Ամեն, օր բնույթը և տևողությունը կապված են երեխաների անհատական հնարավորություններից և նրանց պահանջներից: Այն անցկացվում է դաստիարակի հսկողությամբ:
3. Ակտիվ հանգիստ -Ֆիզկուլտուրային ժամանցներ -Ֆիզկուլտուրայի տոներ -Առողջության օր	Ամիսը 1-2 անգամ՝ 20-30 րոպե Տարին 1-2 անգամ՝ 30-40 րոպե Տարին 1-2 անգամ

Տարրական պատկերացումներ ֆիզկուլտուրայի վերաբերյալ՝

1. Ձևավորել գիտելիքներ իր առողջության պահպանման գործում մաքրության կարևորության, ֆիզիկական վարժությունների օգտակարության մասին:

2. Հաղորդել գիտելիքներ ֆիզկուլտուրային առարկաներով կատարվող գործողությունների և հիմնական շարժումների մասին:

<u>Հիմնական շարժումներով վարժություններ</u>

Շարում և շարափոխում. շարասյան, շրջանի, շարքի կազմում՝ ենթախմբերով և ամբողջ խմբով (դաստիարակի օգնությամբ, ցուցումով և ինքնուրույն): Շարքում իր տեղը գտնել:

Քայլք. ծնկները վեր բարձրացնելով, ոտնաթաթերի վրա, կից քայլերով՝ առաջ, կողմ: Քայլք շարասյունով և շրջանում՝ միմյանց հետևից, զույգերով: Քայլել դաստիարակի առաջադրանքով՝ դադարներով, կքանստելով, առարկաները շրջանցելով, «զիգզագաձև»:

Վազքեր. շարասյունով՝ պահպանելով տարածությունը, փոխելով ուղղությունը, փոքր խմբերով և ամբողջ խմբով՝ հրապարակի մի ծայրից մյուսը: Արագ վազք մինչև 10-20 մ: Բռնել վազողին: Անընդմեջ վազք 50-60 վրկ:

Ցատկեր. եռանդուն վերցատկեր՝ ձգտել ձեռքերով հասնել առարկային, որը կախված է: Ցատկել 4-6 զուգահեռ գծերի վրայով (դրանց միջև տարածությունը 25-30 սմ): Ցատկել մի շրջանից մյուսը: Ցատկել զույգ ոտքի վրա՝ առաջ շարժվելով (2-3 մ): Տեղից հեռացատկ՝ 40 սմ: Ցատկեր մեկ ոտքի վրա: Ցատկել 5 սմ բարձրությամբ առարկայի վրայով: Ցատկել 15-20 սմ բարձրությունից:

Նետումներ. գնդակը գլորել առարկաների միջով, նշան բռնելով (հեռավորությունը՝ 1,5 մ): Գնդակը նետել հատակին և որսալ հետցատկից հետո (2-3 անգամ): Գնդակը նետել հորիզոնական նշանակետին (հեռավորությունը՝ 1,5-2 մ) երկու ձեռքով ցածից և կրծքից, ձախ և աջ ձեռքով: Գնդակը նետել 1,2 մ բարձրությամբ ուղղահայաց թիրախին ձախ և աջ ձեռքով 1,5-2 մ հեռավորությունից:

Սողանցում և մագլցում. չորեքթաթ սողալ գետնին դրված առարկաների միջով, դրանց շուրջը: Սողանցել 40 սմ բարձրությամբ առարկաների տակով: Քայլեցնել հատակին դրված գերանի վրայով; Մագլցել սանդուղքով, մարզապատով:

Հավասարակշռություն. քայլել ուղիղ, նեղ «ճանապարհով» (լայնությունը՝ 15-20 սմ, երկարությունը՝ 2-2,5 մ): Քայլելով անցնել հատակին դրված աստիճանի ձողերի վրայով, միջով: Վազքի ժամանակ, համաձային տրվող ազդանշանի, կանգ առնել (կքանստել) և այնուհետև շարունակել վազքը, բարձրանալ մարզանստարանին, ձեռքերը բարձրացնել վեր, նայել ձեռքերին: Փորձել կատարել «Ծիծեռնակ»: Պտտվել երկու կողմերով՝ թափահարելով թաշկինակը, ժապավենը:

Պարային վարժություններ. շարժումները սկսել և ավարտել երաժշտության հետ մեկտեղ: Նվագակցությամբ քայլել և վազել ռիթմիկ: Փոխել շարժումները երաժշտության բնույթին համապատասխան:

Ընդհանուր զարգացնող վարժություններ

Ձեռքերի և ուսագոտու համար. - ձեռքերը դնել գոտկատեղին: Ձեռքերը կողմերից բարձրացնել վեր, հաջորդաբար իջեցնել մեկ ձեռքը, ապա մյուսը, երկու ձեռքերը միասին: Առարկան մեկ ձեռքից փոխանցել մյուսը՝ առջևում, մեջքի ետևում, գլխավերևում: Ծափ տալ առջևում և ձեռքերը «թաքցնել» մեջքի ետևում:

Ոտքերի համար. բարձրանալ ոտնաթաթերին: Ոտքը թաթով դնել առաջ, ետ, կողմ: Կատարել 2-3 կիսակքանիստ՝ իրար ետևից: Կքանստել՝ ձեռքերը տանելով առաջ, ձեռքերով հենվելով ծնկներին, ձեռքերով գրկելով ծնկները և գլուխը հպելով ծնկներին: Հերթականությամբ բարձրացնելով ծնկում ծալված ոտքը, ծափ տալ ծնկատակում: Քայլել հատակին դրված ձողի վրայով:

Իրանի համար. գնդակը միմյանց փոխանցել գլխի վրայով (առաջ և ետ): Ձեռքերն առաջ ուղղված դառնալ աջ և ձախ: Նստել՝ հենվելով ձեռքերի վրա դեպի ետ, ծալելով ծնկները, ոտքերը ձգել դեպի կուրծքը և տարածել (ոտքերը կրծքին մոտեցրած պահին գրկել ծնկները): Նստած դիրքով թեքվել առաջ: Ծնկներին հենված թեքվել առաջ: Մեջքին պառկած դիրքով երկու ոտքերը միաժամանակ բարձրացնել վեր, իջեցնել, ոտքերով նմանակել հեծանիվ վարելու շարժումներին: Մեջքի վրայից շրջվել փորի վրա և հակառակը: Փորի վրա պառկած արտակորվելով բարձրացնել ուսերը՝ ձեռքերը կողմ տանելով:

Շարժախաղեր

Վազքով. «Վազեք ինձ մոտ», «Թռչունը և թռչնակը», «Մկներն ու կատուն», «Վազեք դրոշակի մոտ», «Գտիր քո գույնը», «Գնացք», «Բրդոտ շունը», «Թռչունները բնում»:

Ցատկերով. «Ցատկել պահպանելով հանձնարարված ուղղությունը» , «Բռնիր մոծակը», «Ճնճղուկներն ու կատուն», «Թփից թուփ»:

Սողանցումով և մագլցելով. «Թուփը և ճուտիկները», «Մկները նկուղում», «Ճագարները», «Կապիկները»:

Նետելով և բռնելով. «Ով ավելի հեռու կնետի պարկը», «Շրջանի մեջ», «Խփիր կեգլիին», «Պահպանիր առարկան»:

Տարածության մեջ կողմնորոշվելով. «Գտիր քո տեղը», «Գուշակիր՝ ով որտեղից է կանչում», «Պահպանիր առարկան»:

Կարողունականություն: Մինչև 4 տարեկան երեխան գիտի շարժախաղերի, մարզաձևերի անվանումները, գիտի առողջության պահպանման համար մաքրության կարևորությունը, ֆիզիկական վարժությունների կատարման օգտակարությունը և հիմնական շարժողական գործողությթունների ձևերը: Կատարում է հիմնական շարժողական գործողությունները առարկաներով և առանց առարկաների: Խաղալ շարժախաղեր, վարել եռանիվ հեծանիվ, ինքնագնաց: Լողի տարերով կատարում է վարժություններ, կատարում է պարզ զուգակցումներով պարային վարժություններ: Կատարում է վարժություններ կեցվածքի

ձևավորման՝ հարթաթաթության կանխարգելման համար: Դրսևորում է ընկերասիրություն, կարգապահություն, համագործակցություն:

Պետք է կարողանա՝

Շարժողական գործողություն	Տղաներ		Աղջիկներ	
	Տարվա սկիզբ	Տարվա վերջ	Տարվա սկիզբ	Տարվա վերջ
Վազք 10 մ ընթացքից	3.4 վրկ.	2.6 վրկ	3.5 վրկ	2.7 վրկ
30 մ վազք բարձր մեկնարկից	10.7 վրկ	9.7 վրկ	10.7 վրկ	9.7 վրկ
Տեղից հեռացատկ	51.5 սմ	70.6 սմ	50.5 սմ	70.2 սմ
Ավազապարկի նետում (150 գրամ) աջ ձեռքով	2.1 մ	4.0 մ	2.0 մ	3.7 մ
Ավազապարկի նետում (150 գրամ) ձախ ձեռքով	1.5 մ	3.0 մ	1.9 մ	2.7 մ

Կոփում

Պահպանել կոփման արարողությունների կատարման պարբերականությունը:

Օրգանիզմը՝ կոփման արարողություններին ընտելացնել աստիճանաբար: Օդային լոգանքները պետք է անցկացնել ամբողջ տարվա ընթացքում: Օդային լոգանքը զուգակցվում է հիգիենիկ մարմնամարզության հետ 10-15 րոպե է: Կոփման միջոցներից է արևային լոգանքների ընդունելը: Այդ արարողության օգտակարությունն ավելի բարձր է առավոտյան ժամը 9-11-ը ընկած ժամանակահատվածում: Արևային արարողությունները պետք է սկսել 5-6 րոպեից, ապա այն անհարժեշտ է մեծացնել աստիճանաբար և հասցնել մինչև 10-15 րոպեի:

Ջրային արարողությունները կոփման լավագույն միջոցներից են:

Դրանց մեջ են մտնում՝ ջրաշփումները, ջրցանումը, ջրշփումը, մինչև գոտկատեղը լվացվելը, լողը:

Ընդհանուր ջրցանում կամ ցնցուղ. նախ պետք է ջերմաստիճանը լինի 34 աստիճան, ապա այն աստիճանաբար իջեցնել և հասցնել մինչև 24 աստիճանի: Ջրցողումը նույնպես պետք է

կատարել 34 աստիճանի ջրով: Նախապես պետք է կազմակերպել երեխաների ջրաշփումը, ապա՝ ջրցանումը, և վերջում անցնել լողի:

Ջրային լոգանքները պետք է անցկացնել այն ժամանակ, երբ արտաքին միջավայրի ջերմաստիճանը 21 աստիճանից ցածր չէ:

Նշված խնդիրները լուծվում են ամենօրյա և ամառային կոփիչ միջոցառումների միջոցով:

Խորհուրդ է տրվում կոփման ժամանակ առաջնորդվել նեքոհիշյալ ցուցումից

Կոփման օրը	Ջրի սկզբնական ջերմաստիճանը
1-3	37-34 ^{0}C
4-7	33-32 ^{0}C
8-11	31-30 ^{0}C
12-15	29-28 ^{0}C
16-20	27-26 ^{0}C
21-25	25-24 ^{0}C
26-30	23-22 ^{0}C

Օրիանակ կոփման առաջին 3 օրերում ջրի ջերմաստիճանը պետք է 37 ^{0}C –ից նվազեցնել 34 ^{0}C:

ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

3-4 տարեկանների համար

Գույքի անվանումը	**Քանակ**
1. Մոմլաթե ուղի (220.35սմ)	1 հատ
2. Սայլակներ,կառքեր	5 հատ
3. Ճոճանակներ–սանդուղքներ	2 հատ
4. Զամբյուղներ՝ առարկաների նետման համար	2հատ
5. Կարճ գունավոր ժապավեններ (երկարությունը 50-60 սմ)	50 հատ
6. Ավազով լցված պարկեր (քաշը՝ 400 գրամ)	2 հատ
7. Ավազով լցված պարկեր (քաշը՝ 150 - 200 գրամ)	8հատ
8. Ռետինե գնդակներ (տրամագիծը՝ 20 — 25 սմ)՝	25 հատ
9.Ռետինե գնդակներ (տրամագիծը 6-8 սմ)	10 հատ
10. Հողմաղացներ-պտուտաններ	10 հատ
11. Մարմնամարզական փայտիկներ (երկարությունը 75 -80 սմ)՝	10 հատ
12. Օղակներ (տրամագիծը 55-65 սմ)	15հատ
13. Օղակներ (տրամագիծը 100 սմ)՝	2 հատ
14. Օղակներ (տրամագիծը 40 սմ)	2 հատ
15. Սահնակներ	2 հատ
16. Դրոշակներ	30 հատ
17. Կարճ հյուսված քուղ (Երկ. 75 սմ)	30 հատ
18.Քուղ (երկարությունը 15-20սմ)	1 հատ

Վերջնարդյունքներ (Հապավում՝ Ֆ)
✓ Իմանա շարժախաղերի անվանումները, ✓ իմանա մաքրության կարևորությունը, ✓ կատարի վարժությունները առարկաներով և առանց առարկաների, ✓ քայլի և վազի ռիթմիկ, ✓ արագ վազի 20 մ ✓ տեղից հեռացատկի 40սմ և ավելին, ✓ գնդակը նետի հորիզանական նշանակակետին, ✓ մագլցի մարզապատի վրա, ✓ սողանցի արգելքների տակով և մարզանստարանի վրայով, ✓ պահպանի հավասարակշռությունը, ✓ խաղա շարժախաղեր քայլով, վազքով, ցատկով, նետումներով,սողանցումով, նետելով-բռնելով, ✓ շարժախաղի ընթացքում կողմնորոշվի տարածության մեջ, ✓ դրսևորի արագաշարժություն, ցատկունակություն, ✓ դրսևորի համագործակցություն, ընկերասիրություն, ✓ վարի եռանիվ հեծանիվ, ✓ վարի ինքնագնաց, ✓ սահի սահնակ:
Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ Շ- (ա), (բ), (գ), (ե), (զ), (է), (ը), (թ), ԽՀ - (ա), (դ), (ե), Ի - (ա), (գ), (դ), ՀՍԱ - (ա), (բ), (գ), (դ), ԻԱԱ -(ա), (բ), (գ), (դ), (ե)

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Երաժշտությունը առանձնահատուկ տեղ է գրավում նախադպրոցական տարիքի սաների դաստիարակության գործում: Այն սաների հոգու հայելին է, նրանց հույզերի, զգացմունքների արձագանքը: Իսկ զգացմունքը երաժշտության հիմնական բովանդակությունն է, սաների հուզական ոլորտը ձևավորելու արդյունավետ միջոցներից մեկը:

Ծրագրային այս բաղադրիչի նպատակն է՝

- սաների մեջ շարունակել հետաքրքրություն սերմանել երաժշտության նկատմամբ,
- զարգացնել երաժշտական տարրական նախագիտելիքները,
- զարգացնել նրանց երաժշտական ունակությունները:

Երաժշտական ստեղծագործությունների զգացմունքային ընկալման շնորհիվ սանը բացահայտում է իրեն շրջապատող աշխարհը, տարբերում է չարն ու բարին, տեսնում գեղեցիկը: Երաժշտությունը արտացոլվում է սանի զարգացման բոլոր ոլորտներում և կարևոր նշանակություն ունի նրա մտավոր, անձնային և գեղագիտական զարգացման գործում: Երաժշտության հմայքը, հուզականությունը, ելևէջները այնպիսին են, որ հնարավորություն են ընձեռում համադրելու ծրագրում տեղ գտած բոլոր պարապմունքների հետ:

Խնդիրները՝

Ունկնդրում

- Դաստիարակել սաների մոտ երաժշտությանը հուզականորեն արձագանքելու ունակությունը,
- զգալ երաժշտության բնույթը (ուրախ, տխուր, հանգիստ), զգացմունքայնորեն արձագանքել դրանց,
- շարունակել զարգացնել երաժշտական հիշողությունը,
- ձևավորել ծանոթ երգեր, պիեսներ ճանաչելու ունակություն,
- ծանոթացնել երաժշտական երեք ժանրերին՝ երգ, պար, քայլք,
- սովորել երաժշտությունը ունկնդրել սկզբից մինչև վերջ,
- ճանաչել և որոշել, թե քանի մաս կա ստեղծագործության մեջ,
- զարգացնել ձայները տարբերելու կարողություն,
- սովորեցնել նկատել ձայնի ուժգնության փոփոխությունը:

Ձայնավարժություն, երգեցողություն

- Զարգացնել սաների երգելու հմտությունները,
- երգել ճիշտ կեցվածքով, առանց լարվածության միևնույն տեմպով, հստակ արտասանել բառերը, փոխանցել երգի բնույթը (ուրախ,տխուր, մեղեդային):

Երաժշտաշարժական վարժություններ

- սովորել շարժվել երաժշտության երկմասանի ձևի և դրա հնչողության ուժգնությանը համապատասխան,

- զգալ երաժշտության սկիզբն ու ավարտը,
- բարելավել շարժման հիմնական հմտությունները (քայլել, վազել),
- սովորել քայլել բոլորի հետ և անհատապես, թեթև վազել՝ երաժշտության ռիթմին համահունչ:

Պար

- Բարելավել պարային շարժումների կատարման որակը, ցատկել երկու ոտքով, մեկ ոտքով, զարգացնել մենակ, զույգերով պտտվելու, երաժշտության հետ ռիթմիկ, տեմպով, երաժշտության բնույթին համապատասխան շարժվելու ունակություն՝ առարկաներով, խաղալիքներով և առանց դրանց:

Խաղ

- Զարգացնել դերի մեջ մտնելու, և այդ դերը արտահայտիչ, ուրախ, զգացմունքային փոխանցելու և հեքիաթային կերպարներին նմանակելու կարողություն (հավերը կտցահարում են, կատուն գաղտագողի վազում է մկների ետևից, նապաստակը ցատկում է, աքլորը կանչում է):

Նվագ բնական, մանկական նվագարաններով

- ծանոթացնել բնական և մանկական նվագարաններին,
- սովորցնել նրանց անվանումները,
- ձևավորել բնական, մանկական նվագարանները ճանաչելու,անվանելու և նրանց հնչերանգը տարբերակելու ունակություն:

Հորինում (իմպրովիզացիա)

- Զարգացնել երեխաների երևակայությունը և ինքնուրույն ստեղծագործելու կարողությունը:

Մատների մարզանք

- Երաժշտության ներքո ամրացնել երեխաների ափերի և մատների մկանները՝ նպաստելով նվագելու, նկարելու, պարելու և այլ կարողունակությունների զարգացմանը:

Երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)

- Երաժշտության ներքո, պարագաներով կամ առանց պարագաների, ռիթմիկ շարժումների միջոցով զարգացնել երեխաների ռիթմն ու լսողությունը, ուշադրության կենտրոնացումը, հիշողությունը, ճարպկությունը:

Երաժշտական թերապիա

- Նպաստել երեխաների առողջական համակարգի խթանմանը, լարվածության վերացմանը՝ երաժշտության ներքո:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Ունկնդրում

● «Լորիկ» ժողովրդական

● «Տիկնիկի հիվանդությունը» երաժշտ.՝ Պյոտր Չայկովսկու

● «Տիկնիկի օրորը» խոսք և երաժշտ.՝ Սվետլաննա Սարուխանյանի
● «Կլոր պար» երաժշտ՝. Ս. Բարխուդարյանի
● «Փոքրիկ քայլերգ» երաժշտ՝. Արեգ Լուսինյանի
● «Ծիտիկը» խոսք և երաժշտ՝. Սվետլաննա Սարուխանյանի
● «Թակարդ» խոսք և երաժշտ՝. Շուշանիկ Բրուտյանի

Երգեցողություն

● «Շվի» ժողովրդական
● «Փաթիլ - փաթիլ» խոսք և երաժշտ. Անահիտ Մովսիսյանի
● «Հոյ նար» ժողովրդական
● «Վարդի ծառ» ժողովրդական
● «Սկյուռիկ» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ՝.Լիլիա Զալինյանի
● «Արջուկ» խոսք Սուրեն Մուրադյանի, երաժշտ՝. Լիլիա Զալինյանի
● «Խնձորի երգը» խոսք ՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
● «Անձրև» խոսք և երաժշտ՝. Անահիտ Մովսիսյանի
● «Գարուն է եկել» խոսք՝ Երվանդ Պետրոսյանի, երաժշտ՝. Հռիփսիմե Խրիմյանի
● «Ձմեռ» խոսք՝ Մ. Միրզայանի, երաժշտ՝.Սուսաննա Գալիկյանի
● «Տոնածառ» խոսք և երաժշտ՝. Հռիփսիմե Խրիմյանի
● «Ողջույն աշուն» խոսք և երաժշտ. Հռիփսիմե Խրիմյանի
● «Աշնան երգպար» խոսք և երաժշտ՝. Ա. Սուլթանյանի
● «Նոր տարվա երգ» խոսք և երաժշտ. Հռիփսիմե Խրիմյանի
● «Մայրիկ» խոսք և երաժշտ՝. Ալվարդ Մանդակունյանի
● «Անձրև» խոսք և երաժշտ՝. Ալվարդ Մանդակունյանի
● «Գայլ» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ՝. Լիլիա Զալինյանի
● «Նապաստակ» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ՝. Լիլիա Զալինյանի
● «Աղվես» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ՝. Լիլիա Զալինյանի
● «Թռչունների երգը» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
● «Նապաստակ» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ՝. Էմմա Միհրանյանի
● «Կարուսել» խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ՝. Արեգ Լուսինյանի
● «Գնդակ» խոսք՝ Էդվարդ Ավագյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
● «Ծիածան» խոսք՝ Յուրի Սահակյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
● «Աշուն» խոսք և երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի
● «Մայրիկ» խոսք և երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի
● «Շունն ու կատուն» խոսք և երաժշտ՝ Ալվարդ Մանդակունյանի
● «Արև լինեմ» խոսք՝ Պատվական Խաչատրյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի

Երաժշտաշարժական վարժություններ, պար, խաղ

● «Եկեք երգենք ու պարենք» խոսք և երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի

● «Ծաղիկների պարը» երաժշտ՝. Պյոտր Չայկովսկու
● «Ու՞մ տնակն է»
● «Ճանաչիր»
● «Մայր թռչունները և ձագուկները»

Նվագ բնական, մանկական նվագարաններով

Նվագարաններով կամ ծափերով վերարտադրել սովորած երգերի ռիթմական պատկերը:

Մատների մարզանք, երաժշտական թերապիա բաժինների երաժշտությունը ընտրում է երաժշտության դաստիարակը՝ հաշվի առնելով երեխաների նախասիրությունները:

Վերջնարդյունքներ (Հապավում՝ Ե)

Ունկնդրում

- Ունկնդրի ստեղծագործությունը սկզբից մինչև վերջ,
- տարբերի երաժշտական հնչյունները,
- նկատի երաժշտական հնչյունների ձայնի ուժգնության փոփոխությունները,
- ճանաչի ծանոթ երգերը,
- որոշի երաժշտության բնույթը, (ուրախ, տխուր):

Ձայնավարժություն, երգեցողություն

- Երգի ճիշտ կեցվածքով առանց լարվածության,
- երգի միևնույն տեմպով,
- երգի հետ չմնալով,
- փոխանցի երգի բնույթը (ուրախ, տխուր),
- հստակ արտասանի բառերը,
- ճիշտ վերարտադրի մեղեդին:

Երաժշտաշարժական վարժություններ

- Կողմնորոշվի տարածության մեջ,
- շարժվի ստեղծագործության երկմասանի ձևին համապատասխան,
- զգա երաժշտության սկիզբը, ավարտը,
- քայլի մենակ,քայլի խմբով, թեթև վազի՝ երաժշտության ռիթմին համահունչ:

Պար

- Կատարի պարզ պարային շարժումներ,
- ցատկի երկու ոտքով,
- ցատկի մեկ ոտքով,
- պտտվի մենակ,պտտվի զույգով,
- պտտի դաստակները,
- զսպանակի,
- կազմի շրջան,

- քայլի շրջանով,
- կատարի պարային շարժումներ՝ երաժշտության բնույթին համապատասխան,
- շարժվի երաժշտության ներքո՝ որևէ պարագայով (ժապավեն, գնդակ), կամ առանց պարագայի:

Խաղ

- ընտրի դերը իր ցանկությամբ,
- դերը կատարի զգացմունքային,
- նմանակի հեքիաթի հերոսներին (հավերը կտցահարում են, կատուն գաղտագողի վազում է մկների ետևից, նապաստակը ցատկում է, աքլորը կանչում է):

Նվագ մանկական նվագարաններով

- ճանաչի բնական, մանկական նվագարանները,
- տարբերի բնական, մանկական նվագարանների հնչերանգները:

Հորինում (իմպրովիզացիա)

- Առաջարկվող նկարին կամ խաղալիքին նայելով հորինի պարզ մեղեդի,
- հորինի ազատ պարային շարժումներ,
- հորինի երաժշտական խաղ:

Մատների մարզանք

- Կատարի մատների մարզանք՝ ընդգծելով երաժշտության բնույթը, տեմպը ռիթմը:

Երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)

- Կարողանա միաժամանակ երգի պարելով,
- պարի նվագելով,
- երգի նվագելով:

Երաժշտական թերապիա

- Աչքերը փակ կամ օրորվելով ունկնդրի մեղմ երաժշտություն,
- երաժշտության ներքո լսի բնության ձայները՝ թռչունների ծլվլոց, առվակի քչքչոց, մեղուների բզզոց և այլն՝ կատարելով համապատասխան շարժումներ:

Բովանդակություն

Ունկնդրում - ուրախ, տխուր ինտոնացիաներ, հակադիր երաժշտության փոփոխություն, ռիթմ, ռեգիստր, տեմպ, ուժգնություն, հնչերանգ, մեղեդի.

Երգեցողություն - ճիշտ շնչառություն, կեցվածք, հնչեղ ձայն, երգի բառերի հստակ արտասանություն, մեղեդու ճիշտ վերարտադրում.

Երաժշտաշարժական վարժություններ - երաժշտառիթմիկ գործունեության հմտություններ, կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ.

Պար - քայլքի տեսակներ, շրջանի կազմում, քայլք շրջանով՝ մեծացնելով և փոքրացնելով այն, պարային շարժումներ՝ պարագաներով և առանց պարագաների, թռիչքներ, պտույտներ՝ մենակ, զույգերով, խմբով, դաստակների պտույտներ, ծափեր,պարի բեմադրում.

Խաղ - երաժշտական դիդակտիկ խաղերգեր, հեքիաթի հերոսների նմանակում երաժշտության ներքո.

Նվագ բնական, մանկական նվագարաններով- բնական, մանկական նվագարաններ, դրանց անվանումները, հնչերանգները.

Հորինում (իմպրովիզացիա) - երաժշտառիթմիկ պատկերների, պարզ մեղեդու, պարային շարժումների, երաժշտական խաղի հորինում.

Մատների մարզանք - մատների մարզանք երաժշտության բնույթին, տեմպին, ռիթմին համապատասխան.

Ռիթմիկ զգացողության զարգացում - երգել պարելով, պարել նվագելով,երգել նվագելով:

Երաժշտական թերապիա -առողջական համակարգի խթանում, լարվածության վերացում:

Գործունեության ձևեր՝ ➢ Պարապմունք ✓ ունկնդրում, ✓ ձայնավարժություն, երգեցողություն, ✓ երաժշտաշարժական վարժություններ, ✓ պար, ✓ խաղ, ✓ նվագ մանկական նվագարաններով, ✓ հորինում (իմպրովիզացիա) ✓ մատների մարզանք ✓ երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում) ✓ երաժշտական թերապիա ➢ Տոն և զվարճալիք, ➢ Զբոսանք, ➢ Երաժշտությունը առօրյայում
Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ Շ-ժգ,է, ԽՀ-բ,գ,զ,թ,ժ, Ի-ա,բ,գ,դ, ՀՍԱ-ա,բ,գ,դ,ե,զ,է,թ, ԻԱԱ-ա,բ,գ,դ,է

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ, ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Կերպարվեստ, կառուցողական աշխատանք» ծրագրային բաղադրիչը նպաստում է կրտսեր նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանն և զգայական փորձի հարստացմանը: Այն ուղղված է սանի ստեղծագործելու ցանկության խթանմանը և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Ծրագրային այս բաղադրիչը նախապատրաստում է սանին արվեստի ստեղծագործությունների ընկալմանը: Նրանք ծանոթանում են արվեստի տարրական արտահայտչամիջոցներին (գույն, ձև, շարժում), զարգանում է հետաքրքությունը ժողովրդական դեկորատիվ կիրառական արվեստի նկատմամբ:

Ծրագրային այս բաղադրիչի խնդիրներն են՝

- ✓ Ձևավորել սանի պատկերացումները կերպարվեստի տարբեր տեսակների մասին (օգտագործել նկարազարդ գրքեր, գեղանկարչական, գծանկարչական նմուշների պատճեններ, փոքր քանդակներ, դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործություններ և այլն):
- ✓ Սովորեցնել սաներին գնահատել հասակակիցների աշխատանքները, դրսևորել բարեհամբույր վերաբերմունք ուրիշների աշխատանքները գնահատելիս,
- ✓ Ստեղծել բարենպաստ պայմաններ սանի գեղագիտական ճաշակի զարգացման համար: Զարգացնել բնության երևույթների, շրջապատող առարկաների զգայական ընկալման և դրական հույզերի արտահայտման կարողությունները,
- ✓ Խթանել պատկերազարդ գրքերի նկատմամբ հետաքրքասիրության զարգացումը, գրքերի ընթերցումն ուղեկցել պատկերազարդ նկարների դիտումներով: Դրանց միջոցով արթնացնել համապատասխան վերաբերմունք հեքիաթի հերոսների նկատմամբ:
- ✓ Ծանոթացնել սաներին կերպարվեստային նյութերին՝ ֆլոմաստեր, ջրաներկ, գուաշ, մատիտներ, վրձին և այլն :

Ապահովել մանկական աշխատանքների թեմաների, պարապմունքների կազմակերպման համար (անհատական և խմբային կոմպոզիցիաների ստեղծում), գեղարվեստական նյութի բովանդակության բազմազանություն :

Կերպարվեստային պարապմունքների ընթացքում ստեղծել բարյացակամ, ստեղծագործ մթնոլորտ :

Վերջնարդյունքներ (Հապավում՝ ԿԿԱ)
Նկարչություն ✓ Ճանաչի և անվանի նկարչական նյութերը, միջոցները և կիրառի դրանք, ✓ ճիշտ բռնի մատիտը և թուղթը, ✓ նկարի մատիտով, մարկերով, ջրաներկով, գուաշով,

- ✓ աշխատի վրձնահպումներով, վրձնահարվածներով,
- ✓ մատիտներով տանի ուղիղ, թեք, հորիզոնական, ալիքաձև, շրջանաձև գծեր (խոտեր, ճանապարհ, ցանկապատ...),
- ✓ նկարի շրջանաձև, քառակուսի, ուղղանկյունաձև պատկերներ (գունավոր վագոններ, դրոշակներ, արև, գնդակ,)
- ✓ նկարի մեծ ու փոքր, երկար ու կարճ առարկաներ,
- ✓ բնօրինակից նկարի 1 առարկա,
- ✓ պատկերի պարզ առարկաներ (ուղիղ և թեք ճանապարհներ, ծառեր),
- ✓ կատարի թեմատիկ աշխատանքներ՝ «Բադիկները քայլուն են՝ տոպ-տոպ», «Անձրև է գալիս՝ կաթ-կաթ»
- ✓ նկարի բնության երևույթներ,
- ✓ նկարել մարդ՝ գլուխ և մեկ գծով պատկերված վերջույթներ,
- ✓ նկարի կենդանի՝ գլուխ և մեկ գծով պատկերված վերջույթներ,
- ✓ կատարի աշխատանքներ ուրվանկարներով և ստվերագծերով (ալիքաձև գծերով զարդարել հագուստը, ներկել տնակը, արևը, ամպերը, միրգը...),
- ✓ ներկայացնել նկարած կերպարի արտահայտչականությունը (Արևը փայլում է: Գնդիկ Բոքոնիկը ծիծաղում է:),
- ✓ պատկերը տեղադրել թղթի կենտրոնում,
- ✓ տարբերի և անվանի հիմնական (կարմիր, դեղին, կապույտ) և մի քանի բաղադրյալ գույներ (կանաչ, շագանակագույն, նարնջագույն, վարդագույն, մանուշակագույն),
- ✓ տարբերի սևն ու սպիտակը
- ✓ երկու գույն խառնի իրար և ստանալ նոր գույն,
- ✓ խմբավորի առարկաներն ըստ գույնի,
- ✓ նկարի հեքիաթից իրեն դուր եկած պատկերը,
- ✓ պահպանի հիգիենայի կանոնները,

Ծեփակերտում

- ✓ Իմանա ծեփանյութի հատկությունները,
- ✓ կատարի տարբեր գործողություններ ծեփամածիկով՝մասից առանձնացնի փոքր մասեր, տեղադրի իրար վրա, միացնի առանձին մասերը, հարթեցնի, տափակեցնի,
- ✓ ծեփի պարզ առարկաներ՝ գնդաձև, գլանաձև, տափակ՝ խնձոր, գնդակ, ափսե
- ✓ տարբերի առարկաներն ըստ ձևի և չափի,
- ✓ բնօրինակից ծեփի մի քանի մասերից բաղկացած առարկա կամ կենդանի՝ նմանեցնելով երկրաչափական մարմինների կամ պատկերների,
- ✓ ճանաչի կավի, ծեփոնի, խմորի հատկությունները (փափուկ է, կարելի է բաժանել մասերի, մասնատել, միացնել),

- ✓ ամբողջ մասից առանձնացնիլ փոքր մասեր, տեղադրի մեկը մյուսի վրա,
- ✓ ծեփի գլան (ձողիկներ, պարան, բլիթ, կոնֆետ), գունդ (գնդակ, միրգ, արև...)

Կառուցողական աշխատանք, ապլիկացիա

- ✓ Տարբերի և անվանի կառուցողական, շինարարական հիմնական նյութերը (խորանարդ, աղյուս, սալիկ),
- ✓ համադրի խորանարդիկները,
- ✓ կառուցի շինություն տարբեր եղանակներով (աշտարակ, աթոռ, սեղան, նավակ)
- ✓ տարբերի շինության մասերն ըստ չափերի (մեծ-փոքր, երկար-կարճ, բարձր- ցածր, լայն-նեղ)
- ✓ կառուցողական նյութերով կատարի կառուցումներ,
- ✓ կատարի պարզ գործողություններ՝ մանր առարկաներով,
- ✓ աշխատի թղթով (կտրի, պատռի, սոսնձի),
- ✓ ստեղծի պատկեր նմուշօրինակից
- ✓ ընտրի գույներ՝ պատկերվող առարկաներին համապատասխան,
- ✓ խավատախտակի վրա կատարի պարզ ապլիկացիաներ նախապես կտրված պատկերներից,
- ✓ պատրաստի երկրաչափական ձևերից (շրջան, քառակուսի) զոլակի վրա սոսնձի առարկայական պատկերներ (գնդակ, սունկ, տնակ և այլն),
- ✓ կտրտված դետալները ճիշտ սոսնձի թղթի մակերեսին (ծաղիկ, գնդակ, տերևաթափ, ձնեմարդ),
- ✓ կազմի պարզ կոմպոզիցիաներ,
- ✓ մեծի հիշեցմամբ հետևի անվտանգության պահպանման հիմնական կանոններին,
- ✓ նյութերն օգտագործի խնամքով:

Գործունեության ձևեր՝

- Խաղեր.
- Պարապմունքներ.
- Փորձարարություն.
- Աշխատանք կենտրոններում.
- Ինքնուրույն գործունեություն.
- Ինքնասպասարկում.

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝

Շ (ը), ԽՀ- (ա), (դ), (ե), Ի (ա),(բ), (գ),(ե), (զ), (է), (ը), ՀՍԱ (ա), (բ),(գ) (զ), ԻԱԱ (ա),(բ) (ե)

ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպումը պայմանավորված է զարգացնող առարկայական միաջավայրի առկայությամբ: Կրտսեր երկրորդ խմբի 3-4 տարեկանների կրթական համալիր ծրագրի լիարժեք իրականացման և կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է պահպանել զարգացնող միջավայրին ներկայացվող հետևյալ պահանջները՝

1. խմբասենյակում ապահովել խաղային պարագաների առկայություն՝ սաների ճանաչողական զարգացման համար՝ խճանկար, բուրգ, երկրաչափական տարբեր անցքերով աղյուսիկներ, բազմագույն խորանարդիկներ, գնդակներ, փոքրիկ մեքենաներ, գրքեր գունեղ նկարներով,
2. սաների առարկայական գործունեության համար ապահովել նյութերի՝ տարբեր չափսերի կենդանիների, տիկնիկների՝ հագուստ, խաղալիք կահույք, տարբեր ձևերի և գույների կառուցողական նյութերի, խաղալիք-հեռախոսների, խորանարդիկների, փայտիկների և այլն, առկայություն:
3. սաների երաժշտական ունակությունների զարգացման համար խաղային պարագաների և սարքավորումների առկայություն,
4. սաների կերպարվեստային գործունեության համար ալբոմների, թղթերի, վրձինների, մատիտների, ֆլոմաստերների, ծեփամածիկի առկայություն
5. զբոսանքների ժամանակ խաղալու համար փոքրիկ դույլերի, կաղապարների, բահերի առկայություն ,
6. քայլքի և այլ շարժումների համար համապատասխան սարքավորումների առկայություն,
7. սաների համատեղ խաղերի համար առանձնացված հատվածի/ գունեղ նկարներով, ծաղիկներով, բույսերով/,առկայություն,
8. խմբասենյակում դիդակտիկ նյութերի առկայություն՝ երեխաների զգայարանների, մանր մկանների համակարգի և սյուժետային խաղերի զարգացման համար,
9. շարժողական խանգարումներ ունեցող սաների համար անհրաժեշտ պայմանների առկայություն՝ հարմարեցված աթոռ սեղան, կանգնակ, սայլակ, քայլակ, տարբեր չափսերի բարձեր, աթոռակներ նստելու ճիշտ դիրք ապահովելու համար, հարմարեցված սպասք (սպասքի ադապտացիաներ), հարմարեցված գրենական պիտույքներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, 2020թ.
2. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ, ՀՀ կառավարության 13 մայիսի 2021թ. N 744-Ն որոշում
3. Առաքելյան Ռ., Շարժախաղեր, Երևան, 2009 թ.:
4. Ավետիսյան Ժ. Կերպարվեստ 3-4, Երևան, 2020թ.
5. Հարությունյան Հ, Չիբուխչյան Կ, Մաթեմատիկայի իմ այբուբենը, 1-ին, 2-րդ մասեր, «ՎաՀա», Երևան, 2008թ.
6. Հովեյան Ս., Հայկական ազգային շարժախաղերը նախադպրոցական կրթական համակարգում, Երևան, 2010 թ.:
7. Հովհաննիսյան Ա. և Մարության Ս. «Պարտեզ», նախադպրոցական կրթական ծրագիր, Երևան, 2008թ.:
8. Հովհաննիսյան Ա., Փոքրիկ բնասեր, Երևան, 2003թ.:
9. Հովհաննիսյան Ա., Նախադպրոցական դաստիարակության հարցեր, Երևան, 2005թ
10. Հովհաննիսյան Ա., Ս. Մարության և ուրիշներ -Մանկապարտեզի կրտսեր երկրորդ խմբի կրթական համալիր ծրագիր Երևան 2011թ.
11. Լուսինյան Ա, Ղազարյան Կ, Երաժշտությունը մանկապարտեզում, «Զանգակ-97»,- Երևան, 2009թ.:
12. Ծառուկյան Ռ. և ուրիշներ, Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը, Երևան, 2010թ.
13. Ծառուկյան Ռ. և ուրիշներ, «Ծնողական կրթություն», Վերապատրաստողների ուղեցույց, Երևան, 2005թ.:
14. Կոստինա Պ. ,Կամերտոն, Պրոսվեշչենիե, Մոսկվա, 2004թ.:
15. Ղազարյան Կ. Երաժշտադիդակտիկ խաղեր, Երևան, 2007թ.:
16. Մարության Ս., Դալլաքյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2008թ.:
17. Մարտիրոսյան Գ. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում , Երևան, 2007թ.:
18. Միտոյան Հ., Սմբատյան Լ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան, 2010թ.:
19. Միտոյան Հ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան, 2020թ.:
20. Մուկոյան Հ. Երեխայի գեղարվեստական դաստիարակության ժամանակակից և տեղեկատվական տեխնոլոգիաներ, Երևան, 2016 թ.
21. Божович Л. И. Личность и ее формирование в детском возрасте –Санкт-Петербург : Питер, 2009. – 400 с

22. Васильева М. А. и др., Программа воспитания и обучения в детском саду, Москва, 2008г.
23. Васильева М.А. Программа воспитания и обучения в детском саду, Москва 2005 г.
24. Венгер Л. А. Готов ли ребенок к школе, М.: Знание, 1994. — 192 с.
25. Гаврилова Т. В.В, А.А.Артемьева, Декоративное рисование, Волгоград, 2011г.
26. Гербова В. В., Развитие речи в детском саду, Москва, 2010г.
27. Занятия аппликацией в детском саду, Москва 1988 г.
28. Занятия по конструированию из строительного материала, Москва, 2007 г.
29. Иванова А. И., Экологические наблюдения и эксперименты в детском саду, Москва, ТЦ Сфера, 2004г.
30. Колдина Д.Н., Рисование с детьми 3-4 лет", "Мозаика-Синтез, 2008 г.
31. Лыкова И.А, Азбука лепки Москва ,2005ã.
32. Малышева А.Н, Н.В. Ермолова,Аппликация в детском саду, Ярославль, 2002 г.
33. Новикова И.В., Конструирование из природ. материала в детском саду, Ярославль, 2009 г.
34. Обухова, Л. Ф. Возрастная психология: учебник для бакалавров / Л. Ф. Обухова. - Москва, 1999. -442 с.
35. Общеобразовательная программа дошk. Образования "От рождения до школы", Москва 2010 г.
36. Программа "Истоки", Москва, 2003г.
37. Программа воспитания и обучения в детском саду "Радуга", Москва, 2006 г.
38. Программа для родителей и воспитателей "Из детства- в отрочество". Москва 2006 г.
39. Программа развития и воспитания детей в детском саду "Детство"Санкт-Петербург, 2004 г.
40. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152575&fbclid=IwAR1eEM6ai3gNAKwDCNr7qWigPZqcySUxreMVrpUAanhhYBtJT3v1UwaWPJE **»:**